

Երեսնյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելգիայի Մալին-Բրուսել ավագ թեմի եւ Բրուսելի շրջանի կաթոլիկ եպիսկոպոսին

Օգոստոսի 3-ին Ս. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ուխտավորաբար Հայաստան ժամանած Բելգիայի Մալին-Բրուսել ավագ թեմի եւ Բրուսելի շրջանի կաթոլիկ եպիսկոպոս Ժան Զոքրուսին։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով սրբազան հոր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, վստահություն հայտնեց, որ այցելությունները հայ ժողովրդի նվիրական սրբավայրեր հոգեւոր խորհրդի անդամների կհանդիսանան եւ անջնջելի տպավորություններ կթողնեն։

Իր հերթին սրբազան հայրը խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ջերմ ընդունելության, հոգատարության եւ ուշադրության համար։

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Բելգիայում ապրող հայ համայնքը վայելում է Կաթոլիկ Եկեղեցու սերն ու հարգանքը։ Անդրադարձ կատարվեց նաեւ երկու Եկեղեցիների միջեւ առկա ջերմ փոխհարաբերություններին։

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Անանյանը։

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ



Չերդ Սրբության ծննդյան օրն առիթ ընդունելով՝ մաղթում ենք Չեզ՝ հայ ժողովրդի հոգեւոր զորաբանակի հովվապետիդ, անսովեր առողջություն եւ արեւշատություն, աղոթում, որ ամենակարող Աստված Չեզ Չեր բոլոր օրերում ու ձեռնարկներում, խոհերում ու ապրումներում օգնական ու սատար լինի՝ միշտ հայրական հոգատարությամբ ու սիրով, հայրական կամեցողությամբ ու ամենատուր օրհնությամբ։ Աղոթում ենք, որ Չեզ հետ անցնելիք մեր ժողովրդի ճանփան անխտոր ու լուսաշող լինի, որ Տերը բազմապատկի Չերդ Սրբության կորովն ու եռանդը, նվիրումն ու նախանձախնդրությունը, որպեսզի համայն հայության հոգեւոր տունը՝ Մայր Աթոռ Սր Էջմիածինը, որպես աստվածահաստ լուսաբաշխ Կանթեղ, անհանգչելի Փարոս, դարերի մեջ ու հավիտյանս մնա հաստատուն ու հավերժագնա։



Օգոստոսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշեց սր Աստվածածնի Վերափոխման տոնը։ Այս բերկրառատ օրվա առիթով միաձուլեց Մայր տաճարում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ ուխտավոր հավատացյալների, մատուցվեց ս. Պատարագ։ Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը։

Սրբազան հայրը, անդրադառնալով տոնի խորհրդին, ընդգծեց, որ քրիստոնյա հավատացյալների համար Տիրամոր վերափոխման հիշատակը միայն պարզ ու սովորական հիշողություն չէ, այլ նաեւ՝ հավատքի զորացման եւ ուխտի վերանորոգման հրաշալի առիթ։

«Վերափոխման այս հիշատակի տոնը, սիրելի՛ հավատացյալներ, մեզ երկու կարեւոր պատգամ է հղում։

Առաջին՝ լինել համեստ եւ հնազանդվել Աստծո կոչին՝ հասնելու համար երանավետ հանգստին։

Սուրբ Աստվածամոր կյանքը փոքր հասկից գերազանցապես եղել է աստվածահաճո կյանք։ Սուրբ Կույսն իր կյանքի յուրաքանչյուր հանգրվանում հնազանդվել է Տիրոջ պատգամներին եւ միշտ ջանացել է կատարել Նրա սուրբ կամքը։ Այս խոսքերի վկան հենց Տիրամոր այն արտահայտությունն է, որն ուղղեց Գաբրիել հրեշտակապետին, երբ իմանալով ամենակալ Աստծո ծրագիրն իր կյանքում, ասաց. «Ահավասի՛կ, ես մտում եմ Տիրոջ աղախինք, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. Ա 38)։

Սուրբ Աստվածածինն իր խոնարհության եւ հնազանդության օրինակով շահեց Տիրոջ վստահությունն ու լիառատ շնորհները, որով դարձավ անտանելի Աստծո Բանի տանելի տաղավարը. իր արգանդում կրեց Նրան, Ումից դողում էին զորություններն ու տերությունները, անգամ սերովբեներն ու քերովբեները վախենում էին նայել Նրան։

Իսկ իր կյանքի մայրամուտին իր հնազանդության համար արժանացավ վերափոխվելու անցավոր այս երկրից դեպի երկինք՝ որպես հարս։

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Շարունակությունը՝ էջ 2

Սկիզբը՝ էջ 1
Մենք եւս, սիրելի՛ հավատա-
ցյալներ, հետեւելով սուրբ Աստ-
վածամոր օրինակին, կոչվել ենք
հնազանդվելու Աստծուն, Նրա
կամքը կատարելու, կոչվել ենք



հավատքով դառնալու Աստծո
լույսի կրողներն ու այն տարա-
ծողներն ամենուրեք, որպեսզի
աշխարհը եւ մենք խավարի մեջ
չմնանք, կոչվել ենք տիեզերքի
մեջ Աստծո շնորհների՝ երկնքից
երկիր առատորեն հեղման՝ մեր
կյանքի հեգույթան ու պարզու-
թյան ճամփով: Ի վերջո՝ կոչվել
ենք մեր կյանքի օրինակով վկա-
ները դառնալու Ամենասուրբ Եր-
րորդությանը, այնպես, ինչպես
Տերը բնակվեց սուրբ Կույսի մեջ,
այդպես Տերը սպասում է մեր
դարձին, որպեսզի բնակվի մեր
մեջ եւ մեզ դարձնի կենդանի
Աստծո բնակության տաճարներ:
Երկրորդ՝ մեր՝ Աստծո նկատ-
մամբ ունեցած հավատքի համար
վարձատրություն չսպասել:
Այսօրվա մեր նյութականա-
ցած աշխարհում մարդ արա-
րածն իր կատարած յուրաքան-
չուր արարքի համար նյութական
կամ բարոյական վարձատրու-

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

րում է մեզ, որ մեր աջ ձեռքի
տվածը ձախը չտեսնի: Մենք ի՞նչ
ուղղությամբ ենք շարժվում: Բա-
րիք ենք գործում վարձատրու-
թյո՞ւն ստանալու համար, թե՞
բարիք ենք գործում որպեսզի
հաճո լինենք մեր Արարչին: Եթե
երկրորդ ուղին ենք ընտրել, ա-
րդարեւ մեր ճանապարհն առաջ-

վստահել Աստծո խնամատարու-
թյանը եւ մեր անձերն ընծայաբե-
րել Նրան», - Նշեց Վարդան սրբա-
զանը:

Ապա քարոզի վերջում պա-
տարագիչ սրբազան հայրը հոր-
դորեց Ներկաներին. «Եկեք հաս-
տատակամ վստահությամբ խնդ-
րենք տիեզերքի խնամատար



նորդողը եւ կյանքի ապավենը
մեր Տերն Ի՛նքն է, եւ մեր ձեռնար-
կած յուրաքանչյուր քայլ աստվա-
ծահաճո է:

Ուստի յուրաքանչյուր քրիս-
տոնյա անհատի կոչումը պիտի
լինի հնազանդվել Աստծո սուրբ
կամքին եւ առանց ակնկալիքի՝
անսակարկ նվիրում ցուցաբերել
բոլորի հանդեպ՝ քաջ գիտակցե-
լով, որ յուրաքանչյուր մարդ ան-
հատ իր մեջ կրում է Աստծո
պատկերն ու նմանությունը: Այս է
մեր հավատքի ուղին: Այս է Աստ-
վածամոր օրինակը մեզ ամեն-
քիս՝ անվերապահ հավատքով



միջնորդ ս. Կույս Մարիամին, որ
նորոգի մեր մեջ իրական ծնողա-
կան սիրո զգացումը, ընտանե-
կան եւ եղբայրական միջանձնա-
յին հավատարմությունը, հաշ-
տեցնի մեզ մեզ հետ եւ մեր ու Տի-
րոջ միջեւ դառնա մեղքին հաղթե-
լու կամքի նորոգություն եւ մեր
հոգիները վերափոխի դեպի երկ-
նային իմացական եղելություն-
ներ, որտեղից մշտապես շնոր-
հաց շողն է կաթում ու մեր մեջ
վերահաստատում կյանքի պայ-
քարի զգացումը՝ չտկարանալու
երբեք, այլ Աստծո խոսքին հնա-
զանդ, հավատքի ապրումով
ակնկալելու եւ սպասելու երկնա-
յին վարձատրության»:

Ս. Պատարագի ավարտին,
հանդիսապետությամբ Ոսկան
արք. Գալփաքյանի, Ս. Տրդատի
բաց խորանում կատարվեց հա-
ղոթությունը, որի ժամանակ հո-
գեպարար շարականի երգեցո-
ղությունից հետո ընթերցվեցին
օրվա խորհուրդն ամփոփող ա-
վետարանական հատվածը եւ ս.
Ներսես Շնորհալու «Խաղողի
օրհնության» աղոթքը:

Վերջում օրհնված խաղողի
ողկույզները բաժանվեցին հա-
վատավոր ժողովրդին:



Սկիզբը՝ թիւ 14

Գրիգոր Իմաստասեր Մարաշեցին, ան-
միջաբար լինելով այս աղետի շրջանում եւ
ականատես անլուր չարագործություննե-
րի, ծանր ապրումներով յագեցած, առօ-
րեական հոգսերով ու մտատանջութեամբ,
առանձնանում, ընթանում է այլ ճանա-
պարհով, իր եւ իւրայինների ապրած սար-
սափն ու հոգեկան տառապանքները, ցա-
ւը արտայայտում է այլ՝ զուտ քնարական
միջոցներով՝ ողբական եւ ապաշխարու-
թեան խօսքեր յղելով առ արարիչն Աս-
տուած:

Գրիգորը, որ Յետուանց վանքի հիմնա-
դիրը եւ վանահայրն էր, կեանքի մեծ մասն
ապրել է այդտեղ, կոչուել է նաեւ Յետուա-
ցի, ԺԲ. դարի գրականութեան մեջ ուրոյն
տեղ է ապահովել իր համար՝ թեպետ տա-
կալին չարժանացած պատշաճ գնահա-
տականի: Նրա կենսագրութեանը վերա-
բերող տեղեկություններն աննշան են: Մա-
տենագրի կեանքի մօտաւոր ժամանակը

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

ճշտելու փորձ է կատարել Նորայր արք.
Պողարեանը (Ծովական)՝ ենթադրելով, որ
մատենագիրը «ծնած է ԺԱ. դարու վերջե-
րը հաւանաբար», իսկ փակագծերով նշում
է՝ (1100?-1160?) (Վանատուր. Բանասիրա-
կան յօդուածներու ժողովածոյ, Երուսա-
ղէմ, 1993, էջ 182): Մեզ հաւանական է
թուում, որ 1171 թուականին Եղեւսիայում
ընդօրինակուած մի Ձեռագրի (Մաշտո-
ցեան Մատենադարանի թ. 313) յիշատա-
կարանի մէջ յիշուած «Գրիգոր միակեացն,
որ աւգնական եղէ ի գինս սուրբ Աւետա-
րանիս», - լինի մեր հեղինակը՝ ուրեմն, նրա
կեանքի ժամանակը առնուազն բարձրա-
նալու է մինչեւ նշուած տարին, ուստի եւ
Գրիգոր Մարաշեցին իսկ եւ իսկ ժամանա-
կակիցն է լինում Ներսէս Շնորհալու: Սա
նշանակում է, որ ճշմարտութիւնից շատ
հեռու չէ Նորայր արք. Ծովականի վերոյի-
շեալ կռահումը:

Մարաշեցին բաւականաչափ ճանա-
չուած դէմք է եղել գոնէ Կիլիկիայում ու յա-
րակից շրջաններում, ունեցել է գիտնակա-
նի ու իմաստասերի համբաւ: Ձեռագրերի
մէջ նա յաճախակի է յիշուում իբրեւ «Գրի-
գոր իմաստասէր Մարաշեցի»: Իր երկերից
մէկի խորագիրն ասում է՝ «Վայք ողբոց մե-
ղուցեալ անձին խոստովանաբար ասա-
ցեալ առաջի Աստուծոյ Գրիգորի միայնա-
ւոր ճգնաւորի Յետուանց եւ անյաղթ գիտ-
նականի՝ յանդիմանութիւն հոգ[ւ]ոյ եւ
մտաց եւ մարմնոյ ի [զ]գուշութիւն սխալա-
նաց, ի բղիւմսն արտասուաց եւ ի խայ-
տառակութիւն մեղաց եւ ծուլութեան, որ է
ի թվիս ԸՂԸ.» (1149) (ՄՄ, Զեռ. 8323, թղ.
164: Յմմտ. Զեռ. 38, թղ. 61բ): Կամ՝
«Սկիզբն խոստովանութեան, յայտնու-
թեան գաղտնեաց եւ պատմութիւն յանցա-

նաց Գրիգորի անյաղթ գիտնականի եւ հո-
գեմատեան հռետորի, որ էր բնակեալ յա-
նապատին, որ կոչի Յետուանց... Խրատ
անձին» (ՄՄ, Զեռ. 2680, թղ. 461ա): Մեր
ընդգծած տողերն ակնյայտ են կացուցա-
նում, որ վերնագրերը հեղինակինը չեն,
այլ խմբագրել են ընդօրինակող գրիչները,
հանգամանք, որ ընդունուած երեւոյթ էր
գրչութեան արուեստի բնագաւառում: Ան-
շուշտ, Գրիգոր Մարաշեցու մեծ հեղինա-
կութեան վկայութիւն է նաեւ մանրանկա-
րի առկայութիւնը. վարդապետը շրջապա-
տուած է աշակերտներով:

Դեռնոյ Ալիշանն առաջինն է ուշադրու-
թեան առել Գրիգոր Մարաշեցու ստեղծա-
գործութիւնը: Անդրադառնալով հեղինակի
«Վայգրքին»՝ նա անում է հետեւեալ ճշմար-
տացի դիտարկումը. «Կան շատ հասարակ
կամ սովորական գրուցուածք եւ կրկնաբա-
նութիւնք, այլ կան եւ ընտիր նկարագրա-
կան բանք եւ խորհրդածութիւնք բարոյա-
կանք, որոց համար կրնայ Իմաստասէր կո-
չուած ըլլալ, այլ թուի թէ ուրիշ աւելի իմաս-
տասիրական գործ մը գրած էր» (Յ. Դեռնոյ
Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ
219: Ընդգծումը՝ հ. Դ. Ալիշանի):

Տարբեր առիթներով Գրիգոր Մարաշե-
ցուն հետազայում յիշատակել կամ անցո-
ղակի անդրադարձել են նաեւ այլ բանասեր-
ներ (հ. Գ. Չարբաւալեան, Յայ իին դպրու-
թիւն (Դ.-ԺԴ. դար), Վենետիկ, 1897, Գ. տիպ,
էջ 662, հ. Ա, Ղազիկեան, Յայկական Նոր
մատենագիտութիւն եւ հանրագիտարան
հայ կեանքի, Վենետիկ, 1909-1912, էջ 471,
Յր. Աճառեան, Յայոց անձնանունների բա-
նարան, հատ. Ա., Երեւան, 1942, էջ 558,
«Յայկական սովետական հանրագիտա-
րան», հատ. 3, Երեւան, 1977, էջ 218 են):

1960 թ. Յ. Մելեանը «Գրիգոր Մարաշեցին եւ
նրա ստեղծագործութիւնները» յօդուածով
փորձել է ի մի բերել Գրիգոր Մարաշեցու եր-
կերը, դրանց աղբիւրները («Էջմիածին»,
1960, 2., էջ 36-43: Յեղիսակը Յայկ Մելքո-
նեանն է: (Տե՛ս «Մատենագիտութիւն «Էջ-
միածին» ամսագրի», կազմող՝ Սեդա Կոծի-
նեան, խմբագրեցին Սուրեն Զօյանցեան,
Արթուր Յատիտեան, Էջմիածին, 1975, էջ
147): Իսկ Նորայր արք. Ծովականը, մատե-
նագրի գործերից նշելով 9 միաւոր եւ ցոյց
տալով իրեն յայտնի ձեռագրերը, յարում է.
«Այս ցանկը կը համարինք առժամեայ,
վասնզի կարելի է որ վերագրեալներուն մէջ
իրեն չպատկանող կտորներ մտած ըլլան, եւ
կամ, աւելի հաւանականութեամբ, իր գրչէն
եւած գործեր՝ անկէ դուրս մնացած» (Վանա-
տուր, էջ 182-184): Յուսանք, որ ի յայտ
կան ձեռագրական Նոր տունեալներ, եւ մա-
տենագիրը մեզ կներկայանայ առաւել ամ-
բողջական իր կերպարով:

Իրեն նախորդած գործիչների պէս Գրի-
գոր Մարաշեցին եւս ուներ նոյն մտահո-
գութիւնները, ինչ, ասանք, իրենից դարեր
առաջ ապրած Մանդակունին: Մեղքերը
թուարկելիս Մարաշեցին «խոստովանել
է» հեթանոսական ուրախութիւնների
տուրք տալը եւ «Վա՛յ ձեզ, լսելիք իմ,- գրել
է բանաստեղծը,- զի լուայք զձայնն լկտի
երգոց դիւականաց, եւ ընդունեցայք
զբանս խաբէութեան եւ ստութեան... Վա՛յ
քեզ, միտք իմ, զի հետեւեցայք հետ չար
ընթացողին, եւ ո՛չ նախանձէի ի կեանս
հոգեւորս... եւ ո՛չ մերժեցիք լսելիք իմ ի
լսել զձայն քնարի եւ այլոց արուեստակա-
նաց»: «Մեղայ»-ների շարքին նա կապակե-
ցում է «ի թատրոն նստելը», թատերական
խաղեր, գուսանական կատակերգութիւն
դիտելը, «լկտի ձայնից» երգեր ունկնդրե-
լը: «Մի՛ զլսելիս բացցուք ի չարաչար լսե-
լութիւնս,- գրել է նա,- եւ մի՛ պոռնկական
երգոց միտ դիցուք, զի մի՛ զուրտ հոգւոց
մերոց մեղկիցեն եւ զմիտսն գերի առնել
տանել տանիցեն»:

Շարունակությունը՝ էջ 3

Ե. ՉԱՐԵՆՑԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 14

Խոսելով Չարենցի ծննդագրերի մասին՝ ավելացնում է. «Ավետիք Իսահակյանը դրանք այդքան էլ» Իսահակյանին բնորոշելով «երկ-չոտ», «փոքրոգի» բառերով, եւ ապա հղում իր հոդվածը Ռ. Ղազարյանի, Ա. Իսահակյանի եւ այլոց վերաբերյալ: Այս հարցը խորքային վերլուծություն է պահանջում՝ կապված Չարենց-Իսահակյան առնչության, 1936 թ. դեկտեմբերի 5-ին (Ստալինյան Սահմանադրության օրը) Իսահակյանի վերադարձի եւ հայրենիքում նրա վերահաստատվելու, իշխող վարչակարգին ծառայելու, Ստալինին նվիրված բանաստեղծությունների, գրավոր եւ բանավոր ելույթների, «Սասնա Մհեր» վիպերգի քաղաքականացված եւ հակաժողովրդական բնույթի, բանտից Չարենցի՝ նրան հասցեագրած նամակի ու այդ նամակն անպատասխան թողնելու եւ, ի վերջո, Ռեզինա Ղազարյանին վստահված չարենցյան ձեռագրերից մեկի հանդեպ նրա դրսևորած վերաբերմունքի հետ, ինչն առանձին խոսակցության նյութ է՝ անկախ Ռասելից: Ռասելը չէ, ով կարող է եւ պիտի լուսաբանի այս նուրբ հարցերը:

Քանի դեռ չարենցյան ինքնագրերը մեր ձեռքին չեն՝ բնագրային ստուգումներ անելու նպատակով, հայտնել էինք սոսկ կասկածներ՝ Ռասելի որոշ վերծանումների կապակցությամբ: Այժմ ինքնագրերի առկայությամբ նրա շատ վերծանումներ պարզապես ձայնողանք են:

Հաստատվեցին մեր նախկին կասկածները: Միայն «Արուսին - մենակ (Ուրիշ ոչ ոքի)» պոեմի «Հիմա, լսիր, սկսում եմ իմ ինտիմ...» 5-րդ հատվածի հրապարակման մեջ թույլ է տվել 37 սխալ եւ բաց է թողել 17 տող:

«Մանկատեսք»-ը դարձել է «մանկատես», «բարակ մարմինը»՝ «Բարով մարմին», «գոհվել»-ը՝ «մահվել», «ծիրք»-ը՝ «երգ», «ընդունված»-ը՝ «ընտանեկան»: Բաց են թողնվել բազմաթիվ բառեր: Տողի մեջ իր տեղն ունեցող «սեփական» բառը գետեղվել է հաջորդ տողում:

«Դանթեական սեր» պոեմում (նվիրված Արուս Ոսկանյանին) թույլ են տրված բազմաթիվ վրիպումներ՝ բացակայում են առանձին հատվածներ, սխալ է առանձին տների հաջորդական դասավորությունը: Սխալ է վերծանված բնագիրը. «Դուք երազվել ես», պետք է լինի՝ «Դուք երազվել եք», «ինչպես»-ը դարձել է «որպես», «թեժ»-ը՝ «թեք», «աղջկակերպ»-ը՝ «աղջակերպ», «թումբ»-ը՝ «թամբ»:

«Էրոտիկ երգ»-ում, ինչի մասն են «Տուր ինձ ուղիս երաստանիդ...»-ը եւ «Վերջին երգը»-ը, «Եվ գգվանքով կոնքերիդ // Դավեիր հար» տողերում պետք է լինի՝ «Հավեիր հար», «Օ, աղջակերպ դու պատանի» տողում պետք է լինի՝ «աղջակերպ»:

«Սոնետ հինգերորդ. Լեգենդը» գործում վերծանել է՝ «Նա կհասնե կրկին՝ իր պարտությամբ հզոր», պետք է լինի՝ «Նա կհառնե՝ կրկին՝ իր պարտությամբ հզոր»:

«Չարենց մարգարեն» հոդվածի մեջ կարդում ենք. «Չարենցն էր նախագահում Հայաստանի պետական հրատարակչությունը (Հայպետհրատ)...»: Հայպետհրատը գլխավորում էր ոչ թե նախագահը, այլ տնօրենը, իսկ Չարենցը երբեք տնօրեն չի եղել:

Գրում է. «1937 թ. հուլիսին, իր ձեռքակալությունից քիչ առաջ, Չարենցը փոխանցում է իր ձեռագրերն իր ամենամոտ ընկերներին, որոնք, ըստ մի աղբյուրի,

թաքցնում են դրանք՝ մետաղյա տուփի մեջ դնելով ու թաղելով տնամերձ այգում»: Սա կատարյալ անտեղյակություն է, քանզի ձեռքակալությունից առաջ Չարենցը ձեռագրերը ոչ մեկին չի տվել, չունեի «ամենամոտ ընկերներ», իսկ «մետաղյա տուփի» մասին երբեք խոսք չի եղել:

Անտեղյակության հաջորդ վկայությունը. «...հուլիսի վերջին նա մահանում է»: Չարենցը մահացել է ոչ թե հուլիսի վերջին, այլ նոյեմբերի 27-ի առավոտյան՝ ժ. 7:30-ին:


Գրում է. «...Չարենցի ուսուցիչ Ավետիք Իսահակյանի գործերում...»: Իսահակյանը երբեք Չարենցի ուսուցիչը չի եղել, Չարենցն Իսահակյանից ոչինչ չուներ սովորելու: Ապացույց՝ «Էլեգիա, գրված Վենետիկում» (1925) պոեմը: Իսկ բանտից Չարենցի գրած բանաստեղծությունը լրիվ այլ բացատրություն ունի եւ կապված է դատապարտվածի նրա հոգեվիճակի, ինչպես նաեւ նրա ու Իսահակյանի հանդեպ վարչակարգի դրսևորած բացահայտ երկակի ու խտրական վերաբերմունքի հետ:

Այնուհետ՝ նույն կաշուն մոծավանք. «Ինչպես նշել եմ, Չարենցը բիսեքսուալ էր...», «Չարենցի միասեռական բանաստեղծություններում...»:

Մեր նպատակը չէ Ռասելին հեռացնել Չարենցից, այլ դրդել, որպեսզի ավելի լուրջ ու շրջահայաց մոտեցում հանդես բերի հայոց Հանճարի կյանքի եւ ստեղծագործության հանդեպ:

Բ. Չարենցի իմնագրերի ճակատագիրը

Չարենցին ձեռքակալելուց հետո նրա գրական ժառանգությունը՝ ինքնագրեր (սեւագիր եւ մաք-



րագիր տարբերակներով), նամակներ, գրառումներ, նշագրություններ եւ այլն, բաժանվեց երեք հիմնական մասի՝ Ռեզինա Ղազարյան, Եղիշե Հովհաննիսյան, Գեորգ Էմին: Այդ մասին պահպանվել են նրանց հուշագրությունները: Պահպանվել են նաեւ այլ տվյալներ: Բայց առաջինը լսենք այդ ամենին ականատես հիմնական գործող անձին՝ Չարենցի կնոջը՝ Իզաբելա Նիսգյան (Նիսգովա)-Կողարաշյան-Չարենցին:

Պատմում է Իզաբելա Չարենցը: Իզաբելա Չարենցը ձեռագրերի հետ կապված մանրամասներն այսպես է հիշում. «Հետո մենք Ռեզինայի հետ մտանք նրա (Չարենցի - Դ. Գ.) սենյակը: Ասում եմ. «Ռեզինա, ես մի ճամպուկ ունեմ, Չարենցի ունեցած էր բոլոր մաքրագիրները պահարանում են, կհավաքեմ՝ դու վերցրու: Կարող է պատահել, որ ինձ բանտարկեն: Կգան, կխուզարկեն եւ այս բոլորը մեկ էլ տեսար ոչնչացրին: Իսկ դու կարող ես ինչ-որ կերպ պահպանել դրանք: Քանի որ Չարենցը վստահում էր քեզ, դու կարող ես դրանք պահպանել»: Բայց նա ասում է. «Ես վաղը կգամ»: <...> Հաջորդ օրը նա ինձ մոտ եկավ երեկոյան ժամը իննին:

<...> Ես, ուրեմն, բոլոր այդ ձեռագրերը, որոնք գտնվում

էին կարմիր պահարանում, հավաքեցի: Դրանք նրա մաքրագրություններն էին: Ես գիտեի, որ դրանք մաքրագրություններ էին, որովհետեւ նա, երբ մաքրագրում էր, պահում էր սեկրետերում: Իսկ սեւագրությունները նրա գրասեղանին էին, ուր դրված էին նաեւ նամակները... Ինչքան մաքրագիր կար, բոլորը տվեցի. անտիպները, բոլորը մաքուր՝ տպագրության համար: Դրանք գիտեի մաքրագիր են, այդ բոլորը հավաքեցի, դրեցի ճամպուկի մեջ եւ «Գիրք ճանապարհի»-ի մեկ օրինակը, որ նա նվիրել էր աղջկա: Դա էլ դրեցի: Ասում եմ. «Նրա բոլոր գրքերը վառում են, գուցե ես մի գիրքը մնա քեզ մոտ»: <...> Նա կաշվե թիկնոցով էր, ճամպուկը դրեց կաշվե թիկնոցի տակ եւ երեկոյան ժամը իննին (երկու դեպքում էլ Իզաբելան նշում է ժամը ինը, քանի որ Ռեզինայի գալն ու գնալը շատ արագ է եղել - Դ. Գ.) դուրս եկավ: Եսպես, շագանակագույն կիսակրոր փոքրիկ ճամպուկ էր: Չարենցը մշտապես դրանով բաղնիք էր գնում: <...> Ես հետո էլ ոչինչ չիմացա այդ ձեռագրերի եւ Ռեզինայի կյանքի մասին: Ի՞նչ արեց նա դրանք, ո՞ր պահեց՝ ես այդ մասին այլեւս չիմացա»:

Շարունակությունը՝ էջ 5



Սկիզբը՝ էջ 2

Եւ նա, այս հանգամանքը հաշուի առնելով, պիտի փորձեր առաջադրել Եկեղեցու համար ընդունելին, այլընտրանքայինը, որ Նարեկյանու ժամանակներից արդեն քայլ առ քայլ կեանքի էր կոչուել: Նա յղանում է աւետարանական Նիւթի հիմամբ ստեղծել մի գործ, որ ի վիճակի լինէր մարդկանց հեթանոսական այդ մեթոդի երեւոյթներից գոնէ փոքր-ինչ հեռացնել, շեղել դեպի քրիստոնէական արժեքները: Ու քանի որ իր դարաշրջանը բնորոշ էր Աստուածանի պաշտամունքի ջերմացումով, ընտրութիւնը կանգ է առել Մարիամի Վերափոխման դրուագի վրայ: Եւ նա գրել է իր առաւել

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

ինքնատիպ գործերից մի քանիսը՝ Աստուածամօրը նուիրուած էջերը, մասնաւորաբար՝ «Բան գովեստից պատմագրաբար յաղագս ծննդեան, սննդեան եւ քաղաքավարութեան, եւ վասն Փոխման ամենասրբուիւոյ եւ փառաւորեալ միշտ կուսին Մարիամու Աստուածածինին» ոչ ճիշտ վերնագրուած երկը, որ, սակայն, նուիրուած լինելով բացառաբար Վերափոխումին՝ նախընտրելի է վերնագրի համառօտ տարբերակը՝ «Բան գովեստից յաղագս Փոխման ամենասրբուիւոյ եւ փառաւորեալ միշտ կուսին Մարիամու Աստուածածինին»:

Բաւական շատ են Վայգրքի եւ Մարաշեցու համանման միւս գործերի ընդօրինակութիւնները, մինչդեռ Աստուածածինին նուիրուած նրա գործերը միջնադարում առանձնապէս տարածուած չունէին՝ դատելով առկայ ձեռագրական տուեալներից:

Աստուածածինին նուիրուած երկերից այսօր մեզ յայտնի են.

1. *Բան գովեստից...* (սկ. «*Չլուսաւոր մարգարիտն, զքարն պատուական...*»), 2եռ. 38, թղ. 41ա.-55ա.,
2. *Նորին Գրիգորի ասացեալ* (սկ. «*Բարեբանեալ ես, ամենասրբուիւի Աստուածածին...*»), անղ., 55ա.-61բ. (սա ըստ Էութեան Նախորդի մասին է),
3. «*Նորին Գրիգորի առ բարեխօս զՄա-*

րիամ սուրբ Աստուածածին» (սկ. «*Ո՛վ ամենասրբուիւի Աստուածածին...*»), անղ, թղ. 70ա.-71բ.,

4. *Մաղթանք աւարտ բանի Վերափոխման Աստուածածինին* (սկ. «*Պաղատողդ առ Զաղցրալուրն, միջնորդդ առ Գթածն, մաղթողդ առ Ընդունողն...*») (Վանատուր, էջ 183):

Մեր ձեռքի տակ են առաջին երեքը: Նկատենք, որ Ժ.ԺԳ. դարերում Աստուածածինն ներթողել են Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Գ. Պաիլաւունին, Ներսէս Շնորհալին (յատկապէս յիշենք Վերափոխմանը նուիրուած գանձը), Գրիգոր Սկեւռացին եւ ուրիշներ: Սոյն եւ չիշատակուած միւս երկերի գլուխն ու պսակը Ողբերգութեան մատենան 2. աղօթքն է (բան):

Սկեւռացու եւ Գրիգոր Մարաշեցու՝ Աստուածամօրը նուիրուած գործերը երբեմն սխալմամբ վերագրել են հեղինակներից մեկին կամ միւսին: Շփոթութեան տեղիք են տուել հեղինակների անունը, մօտաւորապէս ժամանակակից լինելը, խնդրոյ առարկայ երկերի վերնագրերի նմանութիւնը կամ նոյնութիւնը, որ, իրկենք, սովորաբար հեղինակային չեն:

Ինչպէս տեսանք, Եկեղեցու հայրերը, նկատելով հեթանոսական տօների կենսունակութիւնը, վայելած ժողովրդականութիւնը, որոշեցին վերջիններս օգտա-

գործել, ծառայեցնել Եկեղեցու զօրացմանը: Այդպիսով գրեթէ բոլոր հին տօները ներգրաւուեցին, յարմարեցուեցին նորօրեայ տօներին, առաւել արմատաւորելու համար քրիստոնէական դաւանանքը: Չուգակցուեցին Չատիկն ու Քրիստոսի Յարութեան տօնը, Քրիստոսի մուտքը Երուսաղէմ նոյնացուեց Ծաղկագարդի հեթանոսական տօնին, նոյն կերպ՝ Վարդավառն ու Պայծառակերպութիւնը: Վերափոխմանը միացաւ Խաղողօրինէքը, Տեառնընդառաջն ուղեկցուեց հեթանոսական խարոյկներով եւս: Աստիճանաբար փոխուեց վերաբերմունքը նաեւ թատերային ներկայացումների նկատմամբ: Այս պարագայում «առաջամարտիկը» Արեւելեան Եկեղեցին էր: Ընդ որում՝ քիւզանդական Եկեղեցին, օրինակ, Խաղողօրինէքը կատարում էր բացօթեայ, իսկ Աղքատ Ղազարոսի յարութեան միստերիան բեմականացում էր Եկեղեցուց ներս:

Քերթողական արուեստը մօտաւորապէս միջին դիրք է զբաղեցրել բանահիւսութեան եւ Եկեղեցական մատենագիրների միջեւ, այդպիսիք են Գրիգոր Մարաշեցու «Բան գովեստիցը»: Եւ եթէ տաղերգութիւնը հնարաւորութիւն էր տալիս այս կամ այն կերպ հասկանալու այլաբանութիւնները, այստեղ չկայ այլաբանութիւն, միտքը յստակ է: Ինչ վերաբերում է Երգ երգոցին, ապա վաղուց Հարսն ու Փեսան մեկնաբանուել ու ընկալուել են իբրեւ Քրիստոս եւ Եկեղեցի:

Շարունակելի
Արշակ ՄԱՂՈՅԵԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

4.

Սկիզբը՝ թիվ 12-14

Առաջին դեմքով ես-ը Նախ եւ առաջ եւ-թաղում է դիսկուրսի կամ խոսույթի՝ ամբողջ տեղեկատվությունը հեղինակի անձնական զգացումով ու պատումով ներկայացնելու իրողություն: Այսինքն՝ 1913-20 թթ. Կարս քաղաքի ու ողջ Հայաստանի ողբերգական իրադարձությունների պատկերում հանճարեղ ակնատեսի ու ժամանակակցի հայացքով: Ավելի հստակ՝ ստեղծված է կերպավորած հերոսների եւ սրանց գործողության միջավայրի յուրօրինակ հարաբերության համապատկեր, որը մեկնաբանում է հեղինակն ինքը՝ կերպավորելով Նաեւ իրեն: Այդպես է ներկայանում Ռուսական կայսրության հարավային ծայրամասի գավառական հետամնաց քաղաք Կարսը եւ նրա միջոցով՝ ընդհանրացված Երկիր Նաիրին, որ Նույն Նաիրցիների հանցավոր անփութության հետեւանքով մատնվեց Հավիտենական հիվանդի՝ Թուրքիայի ուղորմածությանը եւ հայության համար դարձավ «ցնորք, մի՞ թե ու զառանցանք...»:

Բայց ի՞նչ է Նաիրին իրականում, եւ ինչպե՞ս է այն ներկայացված վեպի երեք գլուխներում: Ակնկալվող պատասխանը բավարար կլինի միայն այն դեպքում, երբ ճշտվեն տեղանական հոգեւոր Նաիրիի եւ չարենցյան իրական, մարմնավոր Նաիրիի սահմանները. չէ՞ որ Չարենցը Նույնությանը չի ընդունել տեղանական Նաիրիի գաղափարը. Նաիրին նրա համար թեւեւ Նախորդից սերած, սակայն ուրիշ՝ արժեք է. «Բայց ո՞վ է, կամ ի՞նչ է Նա - ահա ամենաեականը: Գուցէ մեծ լինի զարմանքդ, սիրելի՛ ընթերցող, եթե ասեմ՝ ե՛ս էլ չգիտեմ: Գիտեմ, որ Նա - կա, եղել է, որպես իմ արյունն է - հին: Կա, - զգում եմ, շոշափում եմ սրտով, տեսնում եմ, - բայց երբ ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ, - կորչում է, դառնում է անտես»:

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՑՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



Ռեույթ, ցնդում է որպես ծուխ կամ ցնորք (5, 11):

Այս անորոշության մեջ կարող են որոշ հստակեցում մտցնել պոեմանման այս վեպի գլուխների բնաբանները, որոնք Չարենցն ընտրել է հատուկ նպատակադրմամբ:

Առաջին՝ «Քաղաքը եւ բնակիչները» գլուխը, որի բնաբանն է Տերյանի «Այստեղ Նաիրյանն է Նագում» տողը, պատկերում է

Նաիրյան քաղաքն իր հին ու Նորոյա հրաշալիքներով, Նախապատերազմական խաղաղ առօրյայով, մարդկային բնական հարաբերություններով ու բարքերով: Հեղինակային աշխույժ պատումն ու զվարթախոսությունն այստեղ կենսական ճշմարտությունը միաձուլում են գեղարվեստական հավաստիությանը եւ բազմաշերտ ու բազմապլան, կենդանի ու բազմաբղետ գունակարը համալրում իրական մանրամասներով: Քաղաքի բնական ու ձեռակերտ հրաշալիքներին միանում են երեւելի կարսեցիները՝ հեղինակային բնութագրումներով ու հաճախ իրենց երգիծական դիպուկ մականուններով, ընդ որում՝ ռուսական անուն-հայրանուններով՝ Համո Համբարձումովիչ Ասատուրով, Օսեփ Կարպիչ Նարիմանով, Մերգե Կասպարիչ, Հաջի Մանուկոֆ Օնիկ Էֆենդի, Բարսեղ Աբգարիչ, Ագրիպակա Վաղիսյան, Օլգա Վասիլենա, Արամ Անտոնիչ, Ակսյոնա Մանուկովնա, Անգինա Բարսեղովնա, կամ մականուններով՝ Գեներալ Այոզ, Զոռ Արուս, Մեռելի Ենոք, Մառանկյոզ Նշան, Բոչկա Նիկոլայ, Կլուբի Մեյմուն կամ Կիստաուրի Սիմոն, Սեւաջա Պրիմադոննա, Շիկահեր Դոլում եւ այլն: Ոչ իսկական անուններով, սակայն հեղինակային դիպուկ բնութագրումներով իրական մարդիկ են քաղաքի՝ «Նաիրախառն ռուսերենով» խոսող բնակիչները, որոնք գործում են վեպի հաջորդ մասերում եւ ամբողջացնում վիպական հյուսվածքը:

Նրանց օտարախուճ անունները ինքնատիպ մտածողության ու հոգեբանության, մարդկային որոշակի ապագային նկարագրի արտահայտություն են: Իր սեփական անմիջական խոսքով եւ այս հերոսների խոսքի, նրանց արարքների եւ իրադարձությունների հանդեպ դրսևորած անմիջաբար արտահայտվող վերաբերմունքով էլ ինքնակերպավորվում է հեղինակը:

Առաջին երկու մասերը, որոնք պատկերում են 1913, 14, 15, 16 թվականները, մի տեսակ Նախապատրաստություն են երրորդ՝ ամենաընդարձակ ու կարեւոր մասի, որն ունի «Պեղգոգունա» գրքում տված «Շոգեգալունստ» բանաստեղծությունից վերցված բնաբան՝ «Միթե սա՞ է Երկիր Նաիրի», հեղինակի խոստովանությամբ՝ գլխավորն է. այստեղ են վիպական գործողությունների զարգացման թե՛ գագաթնակետը եւ թե՛ հանգուցալուծումը, այսինքն՝ Կարս քաղաքի անկման գեղարվեստավերական պատմությունը՝ որպես Նախորդ գլուխներում պատկերվածի տրամաբանական հետեւանք:

«Մենք արդեն անցնում ենք սույն այս վեպի կարեւորագույն մասին, - գրել է Ե. Չարենցը երրորդ եւ վերջին մասի սկզբում, - եւ այստե՛ղ է ահա, սիրելի՛ ընթերցող, որ, ինչպես ասում են՝ իր ամբողջ հասակով կանգնում է մեր առաջ մեր առաջադրած հիմնական խնդիրը, թե ո՞րն է, վերջապես, երկիրը Նաիրի» (5, 177):

Շարունակությունը՝ էջ 6

1436, ըստ որոշ տվյալների՝ 1441 թ., Յոհան Գուտենբերգը հայտնագործում է գրահրատարակչության եղանակը: Հայտնագործությունն անմիջապես Գերմանիայից տարածվում է շրջակա երկրներում, ապա եւ՝ ողջ աշխարհում. համաշխարհային մշակույթի պատմությունը թեւակոխում է տպագիր գրքի դարաշրջան: Գրի պաշտամունք ունեցող հայ ժողովուրդը, բնականաբար, չէր կարող անտարբեր լինել այս դարակազմի իրադար-

ԷՋԱԽԱԾՑԻ ՏՊԱՐԱՆԸ ՈՒ ԹՎԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ


գին միայն լուսավորելով ու կրթելով կարելի է տանել ինքնաճանաչման: Այդ գաղափարի իրականացմանը մեծապես նպաստում է հնդկահայ վաճառական, մեծահարուստ Գրիգոր Խոջաշախյանը (Չաքիկենց, Չաքիկյան),

տառերի հայրերն ու մայրերը: Սարգիս վարդապետը, ով Էջմիածնի Նախկին միաբան էր, Վենետիկից եկել էր Կ. Պոլիս՝ բերելով տպագրական սարքեր եւ իր համար ձուլված տառեր, սակայն, ինչպես գրում է Չարեհանայանը. «Գիր տպագրական փորագրեցեալ ի Վենետիկ, յոյժ ազնիւ եւ քաղցրատես, որով զԷֆենդիտես գիրքն տպեալ էր. եւ պահեր առ ինքն զգիրն, եւ ոչ ումեք տայր, եւ ոչ ինքն զտպագրատունն բախայր»: Սիմեոն կաթողիկոսը մի նամակ է գրում Սարգիսին՝ նրան առաջարկելով այդ տառերը կա՛մ վաճառել, կա՛մ էլ Նվիրել Էջմիածնին: Սարգիսը տառերի համար մեծ գին է պահանջում եւ համաձայնության չի գալիս կաթողիկոսի ներկայացուցիչ Մովսեսի հետ: Սարգիսը, Նույնիսկ բանակցությունները դեռ չավարտած, տառերը վաճառում է կեսարացի Գեորգ դպիրին, որը Կ. Պոլսում տպարան է բացում: Այդ մասին հայ եկեղեցական պատմագրության Մովսես Խորենացին՝ Մաղաքիա արք. Օրմանյանը, գրում է. «Իսկ Սարգիս Սիմեոնի հետ բանակցութիւնները չվերջացած՝ տառերը վաճառեց Գեորգ Կեսարացի դպիրին, որ Կ. Պոլսոյ Վեգիրխանի մէջ տպարան բացաւ, եւ քիչ օր ետքը 1766 մայիս 11-ի երկրաշարժին օրը՝ խանի փլատակին ներքեւ մեռաւ»:

Այնուհետ կաթողիկոսը փորձում է համոզել Չմյուռնիայի հայկական տպարանի տեր Մարկոսին՝ տպարանն Էջմիածնի տեղափոխել: Վերջինս, սակայն, ձգձգում է գործը: Սիմեոնը գրում է Չմյուռնիայի Նվիրան եւ առաջնորդ Ղուկաս վարդապետին: Վարդապետը պատասխանում է, թե Մարկոս տպագրիչը կամե-

ռաքելին առաջարկում է Ղուկաս վարդապետից ստանալ կարեւոր ծախսերը եւ «վասն Մարկոսին եւս ջանալ եւ մի՛ ի կողմն հատանել զբանն»: Չնայած Սիմեոն հայրապետի եռանդուն ջանքերին՝ Առաքելը չի համաձայնում:

Ի վերջո, Վեհափառը որոշում է տպարան ստեղծել տեղի ուժերով: Նա այս ամենի մասին տեղեկացնում է Գրիգոր Խոջաշախյանին եւ խնդրում նյութական աջակցություն: Խոջաշախյանը գործը գլուխ բերելու համար ուղարկում է 3106 ոսկի: Էջմիածնում սկսվում են տպարանի շենքի կառուցման եւ տպագրական պարագաների պատրաստման աշխատանքները. ստեղծվում է գրաձուլարան: Աշխատանքներին աշխուժորեն մասնակցում են կաթողիկոսի տեղապահ Սկրտիչ Շոռոթեցին, ով «Նախկին հեղի-



ծության նկատմամբ. մերազնյա Նվիրյալ զավակների ջանքերով Եվրոպայում ծնունդ է առնում հայ տպագրությունը: Սակայն հայերեն գրքերը, ինչ խոսք, առաջին հերթին պետք է տպագրվեին մայր հայրենիքում. այդ սուրբ գործը կատարելու բարեբախտությունը վիճակված էր Սիմեոն Ա Երեւանցի կաթողիկոսին:

Հայաստանում տպարան հիմնելու միտքը Սիմեոն Երեւանցին հղացել էր դեռեւս Հնդկաստանում հոգեւոր ծառայություն կատարելու տարիներին: Բացի դրանից՝ Կ. Պոլսում եղած ժամանակ Նա ծանոթացել էր տեղի հայ գաղութի մշակութային կյանքին, մասնավորապես՝ տպարանների աշխատանքին, Չմյուռնիայում եղած ժամանակ՝ մեծ աջակցություն ցույց տվել տեղի տպարանի աշխատանքին: Հայոց հայրապետը քաջ գիտակցում էր, որ ազ-

ով, Սիմեոնի կաթողիկոսությունը շնորհավորելով, նրան հիշեցնում է իր հոգեւոր կտակը՝ խնդրելով չմոռանալ այն իրագործել: Զահանայապետն անհապաղ պատասխանում է, որ Սուրբ Էջմիածնին ամենից շատ հարկավոր են Նախ՝ տպարանն, ապա՝ թղթարան, որովհետեւ ուսմամբ է առաջադիմում յուրաքանչյուր ազգ: 1763 թ. կեսերին հայրապետական գահը ստանձնելուց մեկուկես տարի անց՝ 1765 թ. սկզբին, Սիմեոն կաթողիկոսն արդեն աշխատում էր տպարանի բացման ուղղությամբ. նամակներ էր գրում Կ. Պոլսում եւ Չմյուռնիայում գտնվող առաջնորդներին՝ հորդորելով նրանց ձեռք բերել հայկական տպատառեր եւ մամուլ՝ Էջմիածնի տեղափոխելու համար: Վեհափառը փորձում է գնել Կ. Պոլսում բնակվող Սարգիս Սաֆարյանի հայերեն տպա-



նի ունեցած հայկական տառերի մայրերն ու հայրերը, որոնք վերջինս պատվիրել էր Ֆլայշման անունով փորագրիչին: Պողոսյանը մտադիր էր Ամստերդամում հայկական Նոր տպագրություն հիմնել, բայց մի խնդիր կար. սակավ էին տպագրիչ բանվորները: Հայրապետն առաջարկում է տպարանը տեղափոխել Էջմիածնի եւ այստեղ սկսել տպագրական աշխատանքը: Բացի դրանից՝ Նա Ա-

նակ եղել առ փորագրութիւն ի պողովուտայս, եւ Էջմիածնի ոսկերիչ վարպետ Հարությունը, ով պատրաստում է տպատառեր, զարդերի ու պատկերների տպատախտակներ: Տպագրական ձեռքի մամուլը եւս պատրաստվում է այս անձանց շնորհիվ. այդ ամուլը գտնվեց 1910 թ., այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ թիվ 14

Հարկ է նշել, որ չնայած Գերմանիան մտադիր չէր հայերի դեմ թուրքական կամայականություններն ու վայրագությունները գեներալի ուժով արգելել, այնուհանդերձ՝ այդ հարցում չէր որդեգրել նաեւ ծայրահեղ հաշտվողական կեցվածք: Արդեն մարտի 22-ին արտգործնախարարությունը, վկայակոչելով Լիոնի հայկական լրատվական գրասենյակի տեղեկությունները, դեռ Բուխարեստում գտնվող պետքարտուղարին հեռագրում էր, որ Տրապիզոն մտնելուց հետո թուրքերը նոր վայրագությունների են դիմել: Այնուհետեւ տեղեկացնելով, որ Կ. Պոլսի գերմանական դեսպանն այդ մասին տեղյակ է եւ համապատասխան առարկություններ է կատարել, ԱԳՆ-ն պետքարտուղարին առաջարկում էր այդ հարցը բարձրացնել Թալեաթի առաջ: Եվս երկու օր անց պետքարտուղարի տեղակալի կողմից Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը հաղորդվում էր, որ հայերի դեմ մամուլում սանձազերծված քարոզարշավի անմիջական հրահրողը, ըստ ստացված լուրերի, Էսվեր փաշան էր, եւ դեսպանությանը հանձնարարվում էր գեներալ ֆոն Չեկտի միջոցով ազդել Էսվերի վրա՝ այդ քարոզարշավին վերջ տալու համար:

Ապրիլի 3-ին Բուշեն Կոստանդնուպոլսի դեսպանին ուղարկված մեկ այլ հեռագրում հաղորդում էր, որ թուրքական զորքերը, նախկին ռուսական սահմանները հատելով, հասնում էին խիտ բնակեցված հայկական բնակավայրերին: Զանի որ դրանով «աճում էր անկարգությունների վտանգը», պետքարտուղարի տեղակալը դեսպանին հանձնարարում էր Բ. Դանս վրա ազդեցություն գործադրել, որպեսզի զորամասերի հրամանատարներին հրամայվեր խստագույն կարգապահություն պահպանել եւ խաղաղ բնակչության հանդեպ ցուցաբերել անաչառ վերաբերմունք:

Ապրիլին Բաթումի, իսկ կարճ ժամանակ անց Կարսի գրավմա-

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏ -100 1918 Թ. ԹՈՒԲԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



նը հաջորդող իրադարձությունները, սակայն, վերստին վկայում էին, թե թուրքական կանոնավոր եւ անկանոն զորքերը որքան հետեւողականորեն էին իրագործում հայության սպանող, եւ ըստ էության՝ որքան ամուլ էին գերմանական առարկությունները: Գերմանական կառավարությունը, այնուհանդերձ, շարունակում էր բացառապես զուսպ դիվանագիտական առարկությունների ճանապարհով ընթանալ նաեւ այն ժամանակ, երբ դեպքերը կատարելապես փաստարկում էին դրանց անարդյունավետությունը: Մի ճանապարհ, որից նրան չէր հնարվում օգտվել հայ ժողովրդի՝ արտերկրի բարեկամներից հնչող թախանձագին կոչերը, խնդրանքներն ու նախագուշացումները:

Չնայած հայության հանդեպ թուրքական բանակի կողմից իրագործվող վայրագությունների վերաբերյալ բոլոր տեղեկություններին եւ նախագուշաց-

ումներին՝ պաշտոնական Գերմանիան, ինչպես նշվեց, փորձում էր բացառապես դիվանագիտական խողովակներով ազդել թուրքական պաշտոնական շրջանների վրա: Դրա վկայությունն է, օրինակ, պետքարտուղարի տեղակալի կողմից ապրիլի 15-ին դեսպան Բեռնշտորֆին ուղարկված հեռագիրը, որտեղ վերջինիս հանձնարարվում էր ստուգել թուրքական կողմի նորագույն ռազմագործություններին վերաբերող տեղեկությունների իսկությունը եւ միաժամանակ անձամբ հաղորդումներ կատարել թուրքական կողմից գրավված տարածքներում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ: «Զանի որ Բրեստի պայմանագրի՝ Կարսին, Արդահանին եւ Բաթումին վերաբերող որոշումը Թուրքիայի համար մենք ենք ուժի մեջ մտցրել, նշում էր Բուշեն, մենք կհայտնվենք ծայրահեղ անախորժ դրության մեջ, եթե այժմ բարձրացված մեղադրանքները համապա-

տասխանում են իրականությանը: Մենք պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան մեզ վարվի քրիստոնյա բնակչության հետ եւ ամեն տեսակյունից հարգի նրանց իրավունքները:

Մենք նաեւ իրավունք ունենք պահանջելու, որ թուրքերը մեզ իրազեկեն նշված տարածքներում տեղի ունեցող ամեն բանի մասին: Ձերոց Գերագանցությունը պետք է այդ նպատակով Մեծ վեգիրի եւ արտգործնախարարի հետ զրուցի եւ Թալեաթ փաշային հիշեցնի Բուխարեստից վերադարձից հետո հայերի համար համաներում հրապարակելու իր խոստումը: Ներկա պահին այդ միջոցառումը մեզ խոստանում է հանգստացուցիչ ազդեցություն գործել ամենուրեք արդեն ուժգին գրգռված հասարակական կարծիքի վրա: Այն նաեւ չպետք է անտեսի նախկին ռուսական տարածքներում բնակվող հայերին» (*Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam 1919, S. 379*):

Դեսպանը ճշգրտորեն կատարում է հանձնարարությունը՝ Մեծ վեգիրին տեղեկացնելով, որ եթե Թուրքիան կամենում էր, որ Գերմանիան աջակցեր Կովկասում Թուրքիայի քաղաքականությանը, ապա պետք է գերմանական կողմին երաշխիք տար հայկական խնդրի առնչությամբ: Թալեաթն իսկույն եւեթ նրան հավաստիացնում է, որ այդ հարցին վերաբերող իր խոստումն այլեւս կարող է գաղտնի չպահվել, եւ դեսպանին լիազորում է արտգործնախարարությանը տեղեկացնել համաներման մոտալուտ հրապարակման մասին՝ միաժամանակ ավելացնելով, որ ինչպես

համաներումը, այնպես էլ դրա հետ միասին խաղաղ հայ բնակչությանը դրամական փոխհատուցման եւ հայրենիք վերադառնալու իրավունքի տրամադրման հարցերի կանոնարկումը գտնվում են նախապատրաստման փուլում:

Զբավականանալով այդ հաղորդումով՝ գերմանական արտգործնախարարությունն ապրիլի 26-ին պահանջում էր այդ համաներման հրապարակումից առաջ իրեն տեղեկացնել, թե արդյոք վերադարձի իրավունքը միայն աքսորյալների՞ն, թե՛ նաեւ Ռուսաստան փախած հայերին էր վերաբերում, եւ արդյոք ի՞նչ նպատակների համար էր նախատեսված փոխհատուցում կատարել:

Դեսպանն այդ հարցի առնչությամբ նոր հանդիպում է ունենում Թալեաթի հետ, որը տեղեկացնում է, թե համաներումը միայն Թուրքիայում գտնվող հայերին է վերաբերելու, քանի որ երկրում չգտնվողներին հետ վերադարձնելը «վտանգավոր» կլիներ: Իսկ ինչ վերաբերում էր դրամական նվիրատվությանը, ապա այն, իբրեւ թե, պետք է կատարվեր ունեզրկված հայերի կրած վնասների փոխհատուցման համար: Ինչպես Թալեաթն էր նշում, հայերը, ըստ հնարավորի, պետք է ընտրություն կատարեին իրենց նախկին ունեցվածքի եւ մի որոշակի դրամագլխի միջեւ:

Ուշագրավ է, որ Թալեաթի պատասխանը չէր բավարարում գերմանական արտգործնախարարությանը, որը ցանկալի էր համարում հայրենիք վերադառնալու թույլտվություն հատկացնել նաեւ արտագաղթած հայերին: *Շարունակությունը՝ էջ 7*

Սկզբը՝ էջ 3

Իզաբելյան հուշերի մեջ ավելացնում է, որ Չարենցին տանելուց հետո 15 օր շարունակ նրանից լուր չի ունեցել: Հետո տեղեկացրել են: Մտաբերում է շապիկի վրա քիմիական մատիտով Չարենցի գրածը՝ ձեռագրերը Ռեզինային հանձնելու մասին եւ շարունակում. «Ի՞նչ եղավ նրա գրասեղանը, որովհետեւ գրասեղանի վեց դարակները լիքն էին: Նա ընդհանրապես նամակները տեսակավորում էր առանձին թղթապանակով: <...> Ռոմեն Ռոլանը մշտապես նրան գրում էր: <...> Մինչեւ անգամ Տերյանի նամակները Չարենցի մոտ կային: Բոլորը նա պահում էր գրասեղանի մեջ: <...>

Երբ Չարենցին տարան, մի երկու ամիս հետո մեզ մոտ եկավ Եղիշե Հովհաննիսյանը: Նա ասաց. «Ես ՆԳԺԿ աշխատող եմ, եկել եմ ստուգելու Չարենցի աշխատասենյակը»: <...> Հետո ես հարցրեցի. «Ի՞նչ եք ուզում»: Նա ասաց. «Հարկավոր է գրադարանը ցուցակագրել»: Ասացի՝ խնդրեմ: Հետո նա սկսեց բոլոր գրքերը ցուցակագրել: Նա ասաց. «Չարենցի աշխատասենյակում դուք ոչ մի բանի ձեռք չտաք: <...> վաղը ձեզ պիտի այս բնակարանից տեղափոխեն այլ բնակարան: Փոքր սենյակ: Դուք ձեր բոլոր իրերը կարող եք հավաքել. միայն Չարենցի իրերին ձեռք չտաք»:

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ես Ռեզինային արդեն տվել էի ձեռագրերը: Ինչպես Չարենցը գրել էր՝ Էն ժամանակ արդեն տվել էի: Բայց Էնպիսի լավ գրքեր կային: Ես երկու ճամպուրկ դրանք հավաքեցի: <...> Բայց Չարենցի գրասեղանին ձեռք չտվեցի: <...> Եվ ինձ շատ հետաքրքրում է, թե այդ գրասեղանը ո՞ր անհայտացավ: Օրինակ, եթե այն դատարկ լիներ՝ ինչ-որ տեղ ընկած կլիներ, ինչպես պահարանները: Բայց, հավանաբար, ինչ-որ մեկը նրա նամակների, ձեռագրերի, բացիկների, ամեն ինչի հետ, ինչ-որ լիքը կար մեջը, այդ բոլորը վերցրել է»:

Բնակարանից ընտանիքին վտարելուց հետո Չարենցի ունեցվածքի փաստական տերը դարձել է Եղիշե Հովհաննիսյանը: Իզաբելային ձեռքակալել են նոր բնակարան տեղափոխվելուց հետո՝ նոյեմբերի 23-ին: Այդուհետեւ Ե. Հովհաննիսյանը դիմել է Իզաբելայի մորը՝ Աննային. «Ձեզ մոտ չկա՞ն Չարենցի գրվածքներից, գրքերից»: Շարունակում է Իզաբելան. «Երբ ինձ բանտարկեցին, ես գրել էի, որ իմ իրերը տան մորս: Դե, մայրս էլ անգրագետ կին է: Ասել է. «Մի քանի բան կա»



Եւ վերցրել-տվել է նրան: Նա մորս փող է տվել, թե ինչ, չգիտեմ: Եվ նա դրանք վերցրել է» («Չարենցի հետ: Հուշեր», Ե., 1997, էջ 377-382):

Պատմում է Ռեզինա Ղազարյանը: Ռ. Ղազարյանը Չարենցի ձեռագրերի կապակցությամբ իր հիշողությունների մեջ պատմում է հետեւյալը: Չարենցը բանտից իր շապիկի վրա կնոջն այսպիսի գրավոր ցուցում է տվել. «Փրկիր ձեռագրերս: Այդ հարցով դիմիր միմիայն Ռեզի-

նային եւ վստահիր նրան, նա քեզ կօգնի»: Ռեզինան շարունակում է. «Դրանից հետո Իզաբելյան շտապ դատարկեց միջին չափի մի ճամպուրկ եւ, բացելով Չարենցի գրասեղանի դռները, կարծես տենդի մեջ, հապճեպորեն խցկելով տարբեր դարակներից աչ ու ձախ ձեռքն ընկած ձեռագրերը՝ մոտ քսան թղթապանակ, տեղավորեց այնտեղ: Վերջին երեք հաստափոր թղթապանակները չտեղավորվեցին ճամպուրկում»:

Այս երեք թղթապանակները տեղավորում են ամանեղենի «կրկնահատակ» պահարանի մեջ եւ առայժմ թողնում տանը:

Ռեզինան լեցուն ճամպուրկը հասցնում է տուն եւ նույն գիշեր թաղում տան ներքնահարկում փորած փոսում՝ թղթապանակները փաթաթելով մոմլաթի կտորներով եւ տեղավորելով միջին չափի տակառի մեջ: Այնուհետեւ Իզաբելայի ձեռքակալությունից հետո փրկում է նաեւ մնացած երեք թղթապանակները եւ թաքցնում նախորդների կողքին: Ձեռագրերը թաքստոցից հանել է 1954-ի սեպտեմբերից հետո՝ «մոտ 15 տոկոսը քայքայվել էր, փոշիացել, մոտ 10 տոկոսն էլ՝ կիսաքայքայվել»: Այնուհետեւ. «1955 թվականին անտիպ ձեռագրերի մեծ մասը՝ այդ թվում եւ «Կոմիտաս» պոեմի վերջնական մաքրագիր տարբերակը, հանձնեցի Չարենցի ավագ դուստր Արփենիկին՝ որպես նվեր... Ինձ մոտ մնացած ձեռագրերի մի փոքր մասը՝ 2 280 տող, <...> կարիք էր գգում լրացուցիչ ուսումնասիրության»: Դրանք պաշտոնապես թանգարանին է հանձնել 1969 թ. դեկտեմբերի 23-ին: Մինչեւ հանձնելը այդ ձեռագրերը լուսանկարվել են տուն-թանգարանի համար: Ուսանկարման գործը տեղեւ է մոտ մեկ ամիս (նույն տեղը, էջ 350-360):

Շարունակությունը՝ էջ 7



Սկզբը՝ թիվ 10-14

Քրիստոնեական մտածողության մեջ խաչի աստվածաբանությունը շեշտում է տառապողին սրտակցելու կամ տառապողի հետ նույնասալու գաղափարը: Աստծու մարդեղության խորհուրդն իր գագաթնակետին է հասնում խաչի վրա, երբ Քրիստոսը նույնանում է մարդու հետ՝ կիսելով նրա ճակատագիրը: Քրիստոսի խաչելությունը նույնացման աստվածաբանության լավագույն օրինակն է, որն օգնում է մեզ կիսել մեր մերձավորի ցավը, վանել նրանից վախի ու լքվածության գագույնը, ցույց տալ նրան մեր բարեկամությունը, հոգատարությունը, ապրել նրա հետ՝ նրա համար: Տեղին է հիշել ժամանակակից գերմանացի աստվածաբան Յորգեն Մոլտմանի հայտնի արտահայտությունը, թե խաչը չի կարող սիրվել, սակայն միայն խաչյալ Քրիստոսը կարող է բերել այն ազատությունը, որը վերափոխում է աշխարհը, քանզի այն այլևս չի վախենում մահից: Խաչի աստվածաբանությունը զարգացնելուց հետո Մոլտմանն այն եզրակացության է հանգում, որ երբ մերժված Մարդու Որդին Հարություն է առնում Աստծու ազատության մեջ, հարության հանդեպ հավատը հարություն տվող հավատ է դառնում, որտեղ էլ այն վերափոխում է հոգեբանական և սոցիալական համակարգերը, որպեսզի մահվան վրա կենտրոնանալու փոխարեն նրանք կյանքի վրա կենտրոնանան: Հարության կամ հույսի աստվածաբանության վախճանաբանական այս ըմբռնումն ընկած է ողջ քրիստոնեական մտածողության հիմքում, որն արմատապես փոխում է Աստծու արքայության մեր ընկալումները: Ուստի, երբ խնամքով, հոգատարությամբ ու սիրով շրջապատում ենք տառապանքի մեջ գտնվող մեր հարազատներին ու անձանդներին, հարության հույսն իրական ենք դարձնում նրանց համար, օգ-

Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Նում ենք նրանց կենտրոնական կյանքի վրա: Եթե լքվածության որեւէ պահի տառապանքն անտանելի, անիմաստ է թվում, ապա մեր ներկայությունն ու սերն անբացատրելի իմաստ են հաղորդում նրանց կյանքի պատմությանը. նրանք հասկանում են, որ իրենց կյանքը, ցավն ու տառապանքը միայն իրենց չեն, տեսնում են կյանքում իմաստներ, հանուն որոնց պետք է եւ արժե ապրել: Բժշկության եւ բարոյագիտության առնչություններին վերաբերող մտքեր հանդիպում ենք միջնադարյան հայ փիլիսոփաների, բժիշկների, մասնավորապես՝ միջնադարի մեծ մտածող Դավիթ Անհաղթի աշխատությունների մեջ: Հիշենք, որ վերջինիս ծննդյան 1500-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեծ շուքով նշվեց Սալոնիկում եւ Երեւանում:

«Սահմանք իմաստասիրության» գրքի 9-րդ գլխում, շարունակելով հայ մեծանուն փիլիսոփա Ներսես Մեծի եւ այլոց մտքերը, հարց է տալիս՝ արդյոք իրավունք ունի՞ կամ կարո՞ղ է բժիշկը թույն տալ, եւ պատասխանում է՝ ո՛չ, որովհետեւ, «ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղող ծովում, այլ ավելորդության ժամանակ, նույնպես եւ խիզախ հոգին փորձությանն ընդառաջ է գնում»: Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք արտահայտվել են Հիպոկրատեսի հանրահայտ «Երդման» մեջ, որտեղ ի թիվս այլ արգելքների՝ բժիշկը երդվում է. «Խոստանում եմ՝ չնայելով խնդրանքի, ոչ ոքի չտալ մահացու դեղ»: Իսկ այն բժիշկը, որ ելնելով այս կամ այն դրդապատճառից, այնուամենայնիվ, դրժում է իր երդումը եւ թույն տալիս հիվանդին, նեթարկվում է ոչ միայն բժշկության աստվածների եւ մարդկանց անեծքին, այլեւ վարչական պատժի, ընդհուպ՝ մահապատիժ: Այդ մասին կարդում ենք հինգերորդ դարի հայ պատմիչ, քերթողահայր Մովսես Խորենացու «Գիրք պիտոյից» աշխատության մեջ:

Հայտնի է, որ ստոիկյան փիլիսոփայության հետեւորդներն արդարացնում էին ինքնասպանությունը մի քանի դեպքում՝ բոլոր մերձավորների կորուստ, տարերային աղետ, մարդկային արժանապատվության ոտնահարում, անբուժելի հիվանդություն, զառամախտ եւ այլն:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս. Ա. Վարդանյանը «Հայաստանի բժշկության պատմություն» ուսանելի գրքում, վերջին երկու դեպքն ուղղակի կապ ունեն բժշկության հետ: Այսպես, օրինակ, ստոիկներն ասում էին. «Արդ, ճիշտ է վարվում նաեւ նա, ով սպանում է ինքն իրեն, եթե նրա մարմինը ենթարկվել է ինչ-որ չար հիվանդության եւ փչացման, այդ անբուժելի ցավից ազատվելու համար»: Այսպես, օրինակ, մի ում կինիկյան (ցինիկ) փիլիսոփա, որը կիսով չափ անդամալույծ էր, դիմեց Հուլիանոս կայսերը՝ ասելով. «Մարմնիս կեսը մեռավ, իսկ մյուս կեսը դեռ ապրում է: Գթա, ով թագավոր, կիսված կինիկյանիս, հրամայիր բժշկել կամ սպանել: Այդպես էլ ճիշտ է վարվում նա, ով խորին ծերության հասնելով՝ վերջ է տալիս իրեն, երբ արդեն սկսում է գառանցել, աղճատ ու անկապ բաներ ասել»:

Եթե ստոիկների պատասխանն էվթանազիային «այո» էր, ապա հայ միջնադարյան փիլիսոփաներից, բժշկապետներից եւ որեւէ մեկի աշխատությունում բացահայտված չէ նման միտք, այդ թվում՝ Դավիթ Անհաղթի, որը մերժում է ինքնասպանությունը. «Իսկ փորձությունները, որտեղ էլ դրանք պատահեն, գոյություն ունեն ոչ թե նրա համար, որ մարդ վերջ տա իրեն, այլ որպեսզի փորձեն մարդու ոգին»: Ուշագրավ է այստեղ մի նուրբ դիտողություն, որ պերճախոս վկայություն է միջնադարյան մեր դպրանոցների. պատժվում է նաեւ իր սանին պատշաճ գիտելիք չտվող ուսուցիչը (բժշկապետը): Ըստ Մխիթար Գոշի եւ Սմբատ Գունդստաբլի՝ բժիշկը կարող է վնասել հիվանդի առողջությունը կամ արագացնել նրա մահը երկու՝ անբավարար գիտելիքների՝ տգիտության, եւ միտումնավոր, կանխամտածված վատություն անելու պատճառով:

Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ճահվիրաներ Մխիթար Գոշի եւ Սմբատ Գունդստաբլի «Հատաստանագրքի» 119 եւ 154 հոդվածների համաձայն՝ միտումով եւ կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող բժիշկները, նաեւ իրենց աշակերտներին պատշաճ գիտելիքներ չտվող բժիշկները պատժապարտ էին:

Այսպիսով՝ ակնհայտ է բժշկի պատասխանատվության խոր գիտակցումը հայ-

կական օրենսդրության մեջ, որ միաժամանակ վկայում է Հայաստանի բժշկանոցների՝ ուսուցման մասնագիտական բարձր մակարդակի մասին:

Նրանք, ովքեր համարում են, որ էվթանազիան հարկավոր է օրինականացնել, ելնում են այն դրույթից, որ «եթե մարդն անբուժելի հիվանդ է, անգործունակ, եւ ինքը կամ իր հարազատները տվել են իրենց համաձայնությունը, կարելի է մահն արագացնել»: Ընդ որում՝ էվթանազիայի կողմակիցները կարծում են, որ էվթանազիան ընտրություն չէ մահվան եւ կյանքի միջեւ, այլ ընտրություն է տանջալի մահվան եւ առանց ավելորդ տառապանքներով մահվան միջեւ: Մահացող մարդու ֆիզիոլոգիական վիճակի մասին պատկերացումների ընդլայնումը հանգեցրել է նրան, որ ժամանակակից հասարակության մեջ տիրապետող է դարձել մահվան՝ որպես անձնական եւ մարմնական քայքայման եւ ինքնառնչացման գործընթացի վերաբերյալ պատկերացումը: Եթե հին ժամանակներում այդ գործընթացն ընկալվում էր որպես անցում այլ կյանքի, ապա եւ հարկավոր էր կատարել այդ անցումը՝ որպես մարդու յուրօրինակ նոր ծնունդ: Այստեղից էլ բխում էր մահառաջի տանջանքների եւ տառապանքների անխուսափելիության մասին պատկերացումը: Ժամանակակից հասարակության մեջ մահվան սպասումը մարդու խոր անվստահության ճգնաժամային վիճակ է, որ հարուցվել է անհայտությամբ, քանի որ ոչ մեկը չի կարող ճշգրտորեն իմանալ, թե ինչ է տեղի ունենում անձի հետ ֆիզիկական մահից հետո: Այստեղից էլ մահվան վախը՝ որպես վիճակ, որը հրահրված է անհայտությունից, ուման մղում է ինչ-որ էլքերի որոնումների: Դրանցից մեկը կյանքից կամավոր հեռանալն է՝ բուժաշխատողի օգնությամբ: Դա է էվթանազիայի սկզբունքային տարբերությունն ինքնասպանությունից: Եվ քանի որ խոսքը վերաբերում է աննմական ճանապարհով կյանքը դադարեցնելու մասին, ապա էվթանազիայի հիմնախնդիրը մնում է բանավեճի առարկա, որն առ այսօր իր վերջնական մեկնաբանությունը չի ստացել ժամանակակից էթիկայում եւ իրավունքում:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՆՔՆԱԿԵՐՊՈԿՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՄԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՑՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



յի, ապա երեկոյան Հայտնի անունով գեներալ-պրոֆեսորի ճառախոսությունները պատկերացում են տալիս երկրի ընդհանուր քաղաքական վիճակի եւ «ընթացիկ մոմենտի» մասին, հստակ ներկայացնում անելիքների ծրագիրը: Մագուլթի Համոն հայրենիքի, մայրենի լեզվի եւ ազգության ու ժողովրդի մասին իր դատողությունները հիմնավորում է Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի եւ Գամառ-Քաթիպայի բանաձեւումներով, իսկ հայրենիքի եւ ազգության հարաբերությունը ներկայացնում Մ. Նալբանդյանի՝ մատենագրության եւ կրիտիկայի մասին ասած մարմին եւ հոգի համեմատություն կարգախոսով, ապա անցնում հոգեւոր ու մարմնավոր Նաիրիների՝ իր եւ Տերյանի ըմբռնումների մեկնաբանությանը՝ հերոսի՝ Մագուլթի Համոյի միջոցով: Հետոսը հայրենիքի եւ ազգության մասին ժամանակակից գիտության անունից ասում է այն, ինչ մտածում է հեղինակը, եւ Չարենցը ներկայանում է որպես Աբովյանի, Ալիշանի, Պատկանյանի ու Տերյանի բնական շարունակություն՝ առանց հակադրվելու իր Նաիրոդներին: Հայրենիքը միայն հողը չէ, այլ նաեւ այդ հողի վրա դրեղով ստեղծված մշակութային ժառանգությունը, որ փոխանցվում է «դարերի սերունդներին»: Բռնագավթված հողը նվա-

կարող եմ ասել, որ Նաիրին այնտեղ է, ուր կա գոնե մի Նաիրցի: Առաջին՝ մարմնավորի, Հայրենիքի իմաստով՝ Նաիրին այնտեղ է, որտեղ ապրել են մեր պապերը, մեր պապերի պապերը եւ նրանց էլ պապերի պապերը, հարգելի հանդիսականներ,- այնտեղ է, ասենք - Վանում, Կիլիկիայում, Բիթլիսում, Դիարբեքիրում, Դերսիմում, Գարահիսարում. իսկ երկրորդ՝ լեզվի, հոգեւորի իմաստով - Նաիրին, կրկնում եմ, այնտեղ է, որտեղ կա, ապրում է այսօր գոնե մի Նաիրցի: Իսկ որտե՞ղ, որտե՞ղ, ասացեք ինդերմ, հիմա չի ապրում մեր եղբայր Նաիրցին... Եվ արդեն-արդեն՝ աշխարհի հեռու ամենախուլ անկյուններից պարզում է իր ձեռքը դեպի իր հայրենիքը, դեպի իր հայրենի Նաիրին - աստանդական զավակը. մարմինը կորցրած ուրվականի նման՝ մարմնանալ է ուզում հազարամյա Նաիրին: Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս մարմնա...»: Այստեղից էր ահա, որ անցավ Մագուլթի Համոն «ընթացիկ մոմենտին» (5, 138 139): Սա վեպի այն դրվագներից է, որտեղ դժվար է տարբերակել ինքնակերպավորված հեղինակի եւ հերոսի խոսքը:

Շարունակելի

Սամվել ՍՈՒՐՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 4

Նկատվում է ինքնակերպավորված Չարենցի պատումի մի կարեւոր յուրահատկություն. առաջին դեմքով հեղինակ պատմողը բացարձակ անկեղծ է իր անհատական խոսքում, սակայն դրանով չբավարարվելով՝ հաճախ էլ նա արտահայտվում է հերոսների խոսքով՝ նրանց վերագրելով իր ծանրածանր խոհերն ու մտորումները, եւ երբեմն էլ դժվար է լինում որոշել՝ դա հեղինակի՞ խոսքն է, թե՞ հերոսի: Նույն հերոսների խոսքի նկատմամբ հեղինակը երբեմն դրսեւորում է հեգնական, երբեմն հաստատական կամ ժխտական վերաբերմունք: Այս իրողությունը, ճիշտ է, արտաքուստ բարդացնում է հեղինակի կամ հերոսների խոսքի ընկալումը, սակայն չպետք է մոռանանք, որ խորհրդային առաջին տարիներին կենսական ճշմարտությունն արտահայտելու միակ հնարավոր եղանակն էր դա, որով կարելի էր շրջանառության մեջ դնել Կարսի մասին ամբողջ ճշմարտությունը՝ բոլոր կարծիքների քննարկումով եւ առավել կարեւորների ընդգծված մատնանշումով: Ամենից կարեւորը «մանկության հարազատ քաղաքի» եւ «կապուտաչյա սիրուհու», երազի «բրոնզե քրոջ» ու «բրոնզե հարսի» կործանման հանդեպ ինքնակերպավորված հեղինակի «վիրխարի ցավի» զգացողության արտահայտությունն է, որ Նախ՝ բանաստեղծական շարքերի, պոեմների, ապա եւ այս վեպի միջոցով փոխանցվում է ընթերցողին:

Կարսի անկման գեղարվեստական պատմությունը, կարելի է ասել, սկսվում է պատերազմով եւ կամավորների հավաքագրումով: Ամառային այգու դալիճում նույն օրվա առավոտյան Մագուլթի Համո-

Սկզբը՝ էջ 5

Եվ այսպես՝ ձեռագրերի մեծ մասը՝ 20+3 թղթապանակ, պահ տրվեց Ռեգինա Ղազարյանին, ում հետ այս հարցում համագործակցել է Անժիկ անունով մի տիկին: Ապահովության նկատառումներով այդ ժառանգությունը թաղվել է Ռեգինայի բարեկամուհի Մեսալինա Խալեյանի պապի՝ Եղիշե Ավետիսյանի տան «ներքևահարկում (Նախկին Ադամյան փողոց 7, այժմ Մարքսի (Խորենացու - Դ. Գ.) նրբանցք)» (նույն տեղը, էջ 353): Վերջինս ետ չվերադարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից: Խոնավությունից շուրջ 25 տոկոսը քայքայվեց, փչացավ, մնացածը հանձնեց Արփենիկ Չարենցին եւ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին (ԳԱԹ): Ձեռագրերը հողի տակ ածխացել եւ փշրվում էին: Փրկելու նպատակով դրանք եկթարկվեցին քիմիական մշակման: Զիմա էլ թանաքը լուծվեց-ներծծվեց թղթի մեջ, եւ էջերը դարձան կա՛մ անընթեռնելի, կա՛մ դժվար ընթեռնելի:

Վերջում Ռ. Ղազարյանի մոտ մնացել էին առանձին ինքնագիր էջեր, որոնք պահում էր փոքրիկ շագանակագույն ճամպուրկի մեջ: Հայկելիս անգամ դրանք ջարդվում, փշրվում, թափվում էին գետնին: «Ծրարներ տարա, տեղավորեցինք մեջը»: «Հիմա-կանից հիմաականը» բարդ ծածկագրերով գաղտնագրված գրու-

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ



թյունը տրամադրեց տպագրության: Այդ եւ մյուս բոլոր ինքնագրերը մահից առաջ (1999) Ռեգինա Ղազարյանը նվիրեց Ե. Չարենցի տուն-թանգարանին:

Ավելացնենք, որ Չարենցի կնոջ ձեռքակալությունից հետո՝ շուրջ մեկ տարի, Ռ. Ղազարյանն է հոգացել երեխաների խնամքը, ապա նրանց հանձնել Իզաբելայի մորը:

Պատմում է Եղիշե Յովհաննիսյանը (Կուրդյան): Թե՛ Իզաբելա Չարենցի վկայություններում, թե՛ ընդհանրապես գրական կյան-

քում՝ Չարենցի հետ կապված, հաճախակի հղվվում է Եղիշե Յովհաննիսյանի անունը: 1989 թ.՝ մահից բառացիորեն մի քանի օր առաջ, գիտենալով, որ կազմում են Չարենցի մասին հիշողությունների հերթական գիրքը, նա ինձ հրավիրեց իր տուն եւ մեծ ցանկությամբ հանդերձ (ինչի համար ինձ կանչել էր), նույնքան մեծ դժվարությամբ տպագրության տվեց իր գրությունը, ինչը լույս տեսավ «Չարենցի հետ: Հուշեր» (1997) գրքում: Չարենցի ձեռագրերի հետ գործ ունենալիս

նա ինչ-որ բան հանձնել է ԳԱԹ-ին, ինչ-որ բան էլ տարել է իր տուն, այլ կերպ՝ յուրացրել եւ հետո էջ առ էջ վաճառել նույն թանգարանին:

Ե. Յովհաննիսյանի մահից հետո նրա կինը՝ Յողիկը, եւ որդին՝ Տիգրանը, ինձ ներկայացրեցին «չարենցյան» ձեռագրեր: Ակնհայտորեն կեղծված էին. կեղծիքը շատ արագ պարզվեց փորձաքննությունից հետո, ինչն իրականացվեց այն տարիների ԳԱԹ-ի տնօրեն Ա. Օհանյանի միջոցով:

Եթե Ե. Յովհաննիսյանի տանը չարենցյան ձեռագրեր պահպանված լինեին, հանուն նյութական շահի՝ ընտանիքի անդամները վաճառքի կհանեին: Ենթադրում եմ, որ Ե. Յովհաննիսյանի հաջորդների ձեռքին չարենցյան նյութեր այլեւս չկան:

Անուշավան Վարդանյանը Չարենցի բնակարան է մտել բնակվելու, երբ դեռեւս այնտեղ էր գրադարանը: Ըստ Յովհաննիսյանի՝ ինքը Կենտկոմից իրավունք է ձեռք բերել գրադարանը տեղափոխելու ԳԱԹ, ուր այդ ժամանակ աշխատել է «որպես տնօրենի տեղակալ»: Իր իսկ ակնարկներից ակնհայտ է դառնում, որ կապված է

եղել անվտանգության մարմինների հետ:

Տեղափոխվել է 1600 կտոր գիրք: 160-ը թանգարանի աշխատակիցները յուրացրել են: «Դա մի ժամանակ էր, որ եթե ես Չարենցի գրադարանի կեսը իմ տուն տանեի, հանցանքը կներվեր», - գրում է Յովհաննիսյանը՝ ակնհայտորեն հուշելով, որ այդպես կարող էր վարվել թե՛ գրքերի եւ թե՛ ձեռագրերի հետ:

Յովհաննիսյանը գրում է. «...հանդիպելով ինձ (Իզաբելայի եղբայրը՝ Միքայելը - Դ. Գ.), աղետագին խնդրեց իրենց ընտանիքից հեռացնեմ իրենց մոտ պահվող Չարենցի ձեռագրերը՝ «Requiem aeternam Կոմիտասի հիշատակին» (այս պոեմի մաքրագիր տարբերակի մասին ակնարկում է Նաեւ Ռ. Ղազարյանը - Դ. Գ.), «Թուղթ Իոսիֆ Ստալինին», «Նավգիկե» եւ ծավալով փոքր այլ գործեր...»: Ըստ Յովհաննիսյանի՝ նույն խնդրանքով նրան է դիմել Նաեւ Իզաբելայի խորթ հայրը՝ Ավետիս Կողբաշյանը: Այդ կապակցությամբ Յովհաննիսյանը մի քանի անգամ եղել է նրանց տանը՝ Ալավերդյան 32 հասցեով, եւ որպես անձնական սեփականություն՝ տնօրինել Չարենցի ձեռագրերը, որովհետեւ ամեն ինչ անում էր գաղտնի:

Շարունակելի

Ղազիթ ԳԱՍՊՈՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 5

Այդ նպատակով մայիսի 6-ին ԱԳՆ-ն նոր հեռագիր է ուղարկում դեսպանին՝ նրան հանձնարարելով գեներալ Օտտո ֆոն Լոսովին առաջարկել, որ նա, որպես իրեն տրված հրահանգների փաթեթի հավելում, փորձի հաղթահարել արտագաղթածներին վերադարձի թույլտվություն տալու վերաբերյալ թուրքական «տարա-կույսները»: Նշելով, որ նրանց վերադարձի թույլտվության հատկացման ցանկությունը հայկական կողմն է արտահայտել՝ ԱԳՆ-ն այդ առնչությամբ ավելացնում էր, որ այդ հայերի՝ Կովկասում կուտակված լինելը հողի եւ կենսամիջոցների բացակայության պայմաններում կհանգեցներ ընդհարումների՝ տեղի ոչ հայկական բնակչության հետ:

Գերմանիան Թուրքիայի հետ իր դիվանագիտական երկխոսության ընթացքում պարբերաբար ընդգծում էր կնքված պայմանագրերից ածանցվող պարտավորությունների պահպանման եւ տեղական բնակչության նկատմամբ վայրագությունների բացառման անհրաժեշտությունը: Բաթումի բանակցությունների նախօրեին՝ ապրիլի 30-ին, գերմանական արտգործնախարարությունը բանակցություններին հետեւող գերմանական ներկայացուցչությանն ուղղված ցուցումների 3-րդ կետում, մասնավորապես, նշում էր, որ հարկավոր էր թուրքական կառավարությանը դրդել, որ նա Բրեստի պայմանագրով Թուրքիային տրված այն տարածքներում, որտեղ հայերը փակ համայնքներում էին ապրում, նրանց տեղական ինքնավարություն, իսկ երկրի մյուս շրջաններում իրենց եկեղեցական եւ մշակութային գործերը կարգավորելու լիարժեք ազատություն տրամադրեր:

Թուրքական կառավարությունը, Գերմանիայի նախագուշացումների եւ առաջարկների առնչությամբ տալով համապատասխան հավաստիացումներ, սա-


1918 Թ. ԹՈՒՐԿԱՆ ԱՐՇԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

կայն լավ գիտակցելով, որ Գերմանիան վերոնշյալ խնդիրների պատճառով երբեւէ ուժի դիրքերից չէր խոսի, ոչ միայն այդ առաջարկների իրականացման ուղղությամբ որեւէ գործուն քայլ մտադիր չէր ձեռնարկել, այլեւ, ընդհակառակը, շարունակում էր խորանալ հայկական տարածքներում՝ առաջնախույժ դեպի Երեւան: «Հայերի հետ բանակցելու որեւէ շարժառիթ չկա, - արդեն ապրիլի 13-ին արտգործնախարարությանը հաղորդում էր դեսպան Բեռնշտորֆը, - քանի որ թուրքերի՝ անակնկալ արագությանը հաջորդող ռազմական հաջողությունները նրանց դարձրել են իրենց նախկին տարածքի, ինչպես նաեւ Բաթումի, Արդահանի եւ Կարսի սանջակների մեծագույն մասի տերը» (*Die Armenische Frage und der Genozid an den Armeniern, Dokumente aus dem politischen Archiv des des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, S. 483*):

Երբ թուրքական բանակը Բրեստի պայմանագրով Թուրքիային հատկացված տարածքների գավառից հետո շարունակեց առաջանալ, գերմանական կողմում, որն ակնհայտորեն այդ հանգամանքի հետ հաշվի չէր նստել, ի հայտ եկան լուրջ տագնապներ եւ անհանգստություններ նաեւ այն պատճառով, որ Գերմանիան թուրքերի առաջխաղացմամբ եւ գրավումներով վտանգված էր տեսնում նաեւ Անդրկովկասում իր սեփական տնտեսական շահերը: Գերմանական կառավարությունը, սակայն, հակված չէր Թուրքիային կոշտ միջոցների

գործադրմամբ պարտադրելու պահպանել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները, մինչդեռ հայկական կողմն իրադրության վատթարացմանը զուգընթաց ավելի եւ ավելի էր փորձում ապավինել Գերմանիայի աջակցությանը՝ թուրքական նոր վայրագությունները եւ կոտորածները կանխելու համար: Այդ նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից ապրիլի երկրորդ կեսին մի պատվիրակություն ուղարկվեց Բեռլին, որի կազմում էին Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանը եւ Գեորգ Մելիք-Ղարաբոյունը: Ճանապարհին՝ մինչեւ Բեռլին հասնելը, պատվիրակությունը «քաղաքակիրթ աշխարհին» օգնության մի սրտառուչ կոչ հղեց, որն ապրիլի 20-ին հրապարակվեց Լիոնի ռադիոհաղորդագրությամբ: Բեռլին հասնելուց հետո նրանք օգնության մի շարք խնդրագրեր ներկայացրեցին արտգործնախարարությանը, որտեղ գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էին հայության ճգնաժամային դրության վրա եւ խնդրում էին ազդու կերպով միջամտել՝ արգելելու համար հայերին սպառնացող աղետը:

Պատվիրակությունը ցանկանում էր նաեւ կանցլերի հետ տեսակցություն ունենալ, բայց նրա խնդրանքը մերժվեց: Նրանք կարողացան հանդիպել միայն պետքարտուղարի տեղակալ ֆոն դեր Բուշեին եւ գաղտնի խորհրդական Գյոպերտին, որոնք, սակայն, նրանց օգնության որեւէ խոստում չտվեցին՝ նշելով միայն, որ Գերմանիան նոր կոտորածները եւ վայրագությունները բացառելու նպատակով դի-



վանագիտական խողովակներով փորձում է ազդել Թուրքիայի վրա:

Պատվիրակությունը դիմեց նաեւ Բեռլինում Ավստրո-Հունգարիայի դեսպանությանը՝ Վիեննա մեկնելու եւ ավստրիական կառավարության հետ հանդիպումներ ունենալու համար: Երբ, սակայն, ի պատասխան նրանց տեղեկացվեց, որ արտգործնախարար Բուրյանը չէր կարող նրանց ընդունել, նրանք իրենց առաքելությունը համարեցին ավարտված եւ, վերջին ուղեծրը հղելով արտգործնախարարությանը, բռնեցին վերադարձի ճանապարհը: Ուղեծրում տեղեկացնելով, որ թուրքական գործերն արդեն ներխուժել են Երեւանի նահանգ եւ առաջանում են դեպի Երեւան ու Էջմիածին՝ պատվիրակությունն ընդգծում էր, որ եթե դաշնակիցները նրանց չկանգնեցնեն, ապա հայերն ստիպված կլինեն կենաց ու

մահու պայքարի դուրս գալ, որն ամբողջ Կովկասը կվերցնի «բռնեցի մեջ»: Պատվիրակությունը նաեւ նախագուշացնում էր, որ, հակառակ պատերազմում չեզոք դիրքորոշում ունենալու իր մտադրությանը, հայկական կողմը հարկադրված էր լինելու ընդունել ցանկացած օգնություն, որ երկրի կողմից էլ որ դա ցուցաբերվեր:

Գերմանիայի պաշտոնական քաղաքականությունը, այսպիսով, մտադիր չէր հրաժարվել իր ավանդական գործելակերպից, այն է՝ Թուրքիայի հետ հաբերությունները չվտանգել եւ միաժամանակ փորձել պաշտոնական ու ոչ պաշտոնական նախագուշացումների միջոցով իրեն ապահովագրել թուրքական ոճրագործությունների համար մեղսակից եւ համապատասխանատու դառնալու վտանգից:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ էջ 6

Ըստ միջազգային հարցումներին՝ յուրաքանչյուր 1000 մարդուց 7-ը կողմ է կյանքից կամավոր հեռանալուն:

Բազմազան են նաեւ հակափաստարկները: Շատերը համոզված են, որ մահվան արագացումը հակասում է քրիստոնեական եւ ոչ միայն քրիստոնեական ավանդույթներին, «եթե ճանաչվի կյանքից կամավոր կերպով հեռանալու իրավունքը, ապա բժշկական պրակտիկայում այն կհանգեցնի անդամալի կորուստների, անսքող հանցանքների, չարաշահումների՝ թե՛ հիվանդի «հարազատների», թե՛ փոխպատվաստումով զբաղվող բժիշկների կողմից: Այսինքն՝ կյանքից կամավոր հեռանալու պատրվակով մարդուն կարող են զրկել ամենաթանկ արժեքից՝ կյանքից»:

Երրորդ տեսակետի համաձայն՝ Էվթանազիայից կարելի է

օգտվել միայն խիստ բացառիկ դեպքերում՝ ելնելով հիվանդի անձնավորությունից, հիվանդության ընթացքից եւ կոնկրետ իրավիճակից:

Մ. Յերաքու անվան ԵՊԲՀ հասարակական գիտությունների ամբիոնը՝ ԶԳԱ փիլիսոփայության, իրավունքի եւ սոցիոլոգիայի ինստիտուտի հետ համատեղ, պարբերաբար անցկացրել է սոցիոլոգիական հարցումներ՝ ԵՊԲՀ ուսանողների եւ դասախոսների շրջանում:

Պարզվել է, որ հարցվածների 75 տոկոսը դեմ է ակտիվ Էվթանազիային: Կողմ է հարցվածների 8 տոկոսը, իսկ 17 տոկոսը տատանվում է՝ ելնելով հիվանդի վիճակի ծանրության աստիճանից: Նույն հարցով դիմել ենք նաեւ համալսարանի դասախոս-

ներին: Հարցվածների 82 տոկոսը դեմ է ակտիվ Էվթանազիային: Կողմ է արտահայտվել հարցված դասախոսների 15 տոկոսը (դրանց մեծ մասը մինչեւ 40 տարեկան ուռուցքաբաններ ու պաթոլոգանատոմներ են):

Մեր դիտարկումներից եւ հարցումներից պարզվել է, որ նրանք, ովքեր դեմ են ակտիվ Էվթանազիային, ելնում են հետեւյալ փաստարկներից. «Դեղահաբերի մահացու չափաբաժին տալով հիվանդին կամ օգտագործելով ցանկացած նման այլ միջոց՝ բժիշկը, փաստորեն, արագացնում է հիվանդի մահը, ինչը, քրիստոնեության եւ ոչ միայն քրիստոնեության տեսանկյունից ահավոր է, անթույլատրելի եւ պարզապես մեղք: Բժիշկն ավելի գթասիրտ չէ, քան Նա, Ով մարդ-

կային էակին արարել է: Աստված մարդուն կյանք է շնորհել, եւ Աստված էլ կանխորոշված ժամկետում այն նրանից վերցնում է»:

Կամ էլ բժշկի «գթասիրտ» քայլը չի դադարում սպանություն լինելուց նույնիսկ այն պարագայում, երբ այդ քայլին նրան դրդել է գթասիրտության զգացումը, անհուսալի ու ծանր հիվանդին հետագա տառապանքներից ազատելու մարդկային ցանկությունը: Այս տեսակետը պաշտպանողների թվում կան եւլ բժշկության բնագավառի ճանաչված մասնագետներ, եւ դասախոսներ, եւ ուսանողներ, ովքեր ղեկավարվում են քրիստոնեական բարոյականության, հումանիզմի գաղափարներով:

Բազմազան են նաեւ հակափաստարկները: Հարցվածների զգալի մասը համոզված է, որ «ե-

թե հիվանդը գտնվում է կոմայի վիճակում, նրա վիճակը բարելավելու հնարավորություններ չկան», եւ որ «արհեստական շնչառության» սարքը պահպանում է կյանքի միայն արտաքին երեւութականությունը. Էվթանազիան՝ «թեթեւ մահը», հետագա ցավերից ազատելու միակ միջոցն է»:

Կա նաեւ այսպիսի կարծիք. «Սարքը պահպանում է կյանքի միայն երեւութականությունը, որը դրսեւորվում է շնչառության եւ արյան շրջանառության ձեւով, այն դեպքում, երբ իրականում մարդը մեռած է, որեւէ ցավ չի զգում, նրա կենսագործունեության աղբյուրը՝ ուղեղը, արդեն մեռած է»:

Շարունակելի
Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ.
դոկտոր, պրոֆեսոր

1918 Թ. ԹՈՒԻՔԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԸ ԵՎ...

Սկզբը՝ էջ 5

Ինչ վերաբերում է դեսպան Բեռնշտորֆին, ապա վերջինս, լիովին հանդուրժողական դիրքորոշում որդեգրելով թուրքական նվաճողական քաղաքականության հանդեպ, իր կառավարության առաջարկում էր մի հերթական առեւտուր կատարել Թուրքիայի հետ. թուրքական կառավարության կողմից քաղաքականության հարցում Գերմանիայի տեսական աջակցությունը երաշխավորելու դիմաց Թուրքիայից պահանջել, որ նա գրավոր կերպով Կովկասում, որոշակի բնագավառներում, Գերմանիայի տնտեսական շահերի գերակայությունն ընդունելու երաշխիքներ տար: Երբ, սակայն, դեսպանին պարզ դարձավ, որ Գերմանիայի կառավարությունը Վրաստանը Թուրքիային զիջելու մտադրություն չու-

եր նաեւ Գերմանիայի շահերին:

Վերոնշյալ տեսակետին հակառակ՝ թուրքական կառավարությունը ձգտում էր Հայաստանը տեսնել ոչ թե Վրաստանի, այլ Ադրբեյջանի կազմում, անշուշտ, հասկանալի է, թե ինչ պատճառներով: Ինչպես Բեռնշտորֆն արտգործնախարարությանը տեղեկացնում էր իր՝ հունիսի 1-ին ուղարկած տեղեկագրում, Թալեաթը եւ Էնվերն իրեն իրագեկել էին, թե Հալիլը խաղաղություն էր հաստատել Վրաստանի եւ, այսպես կոչված, «Հարավկովկասյան հանրապետության» հետ, որի բնակչությունը պետք է «բաղկանար հայերից եւ թաթարներից» (Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet

ԷԶԱՌԱԾՈՒ ՏՊԱՐԱՆԸ ՈՒ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ




Սկզբը՝ էջ 4

1771 թ. բացվում է սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը՝ առաջինը բովանդակ Հայաստանում: Այդ խավար ժամանակներում, երբ ողջ Պարսկաստանը խոր քնի մեջ էր, նրա տիրապետության տակ գտնվող Հայաստանում հիմնադրվում է տպարան. տպարանի շենքի ճակատին գրվում են հետեւյալ տողերը. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս Նոր ի Նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիքն, հոգաբարձութեամբ Տեառն Սիմեոնի սրբազան կաթողիկոսին Երեւանցոյ, արդեամբ Ջուղայեցի ի Դիւղ բնակեալ բարեպաշտաւ Գրիգոր աղային հօջաքանեան որ մականուամբ Չաքիկեցե, ի յիշատակ իւրեան, եւ իւր ի Զրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայելին եւ Սամխաթունին, իւր կենակից Մատիւնային եւ վաղաթառամ Միքայել որդւոյն, եւ քերցն Աւստարիային եւ Չիպիտային, հօրեղբորացն՝ Եղիազարին, Սաֆարին եւ Աղեքսանդրին, պապուն՝ Գրիգորին եւ կենակից Թագուհւոյն, եւ հօրաքեռն Չիժազատային եւ մեծ պապ Յակոբքանին, եւ հաւրեղբոր դստերացն՝ Պէկզատային եւ Գիւկաբաթին եւ այլ ամենայն հին եւ Նոր Ննչեցեցոյն Նորին: Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ. անգամ ի տաւնի Լուսավորչին եւ Զրեշտակապետացն ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ, յիշելով զՆոսա. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն թ. ՌՄԻ. (1771)»: Սիմեոն Երեւանցու եւ Գրիգոր Միքայելյան-Չաքիկյան-Խոջաքանյանի անունները գրվում են նաեւ տպարանի իրատարակած գրքերի հիշատակարաններում: Այսպիսով՝ լուսավորյալ Վեհափառին հաջողվում է գոյության կոչել այն, ինչը տակավին XVI դարից եղել է շատ հայ գործիչների նվիրական երազանքը. օտար աշխարհում ծնունդ առնելուց 260 տարի անց հայ գրատպությունը մուտք է գործում հայրենիք:

Տպարանի բացման ժամանակ, ինչպես երեւում է, արդեն Չմյուռնիայից եկել էր Մարկոս տպագրիչը, ով մեծ աջակցություն է ցույց տալիս տպագրական գործի հաստատման Էջմիածնում: Բայց նրա գործունեությունը Նորահիմն տպարանում

երկար չի տևում: Տպարանը կարգավորելուց եւ գործի սկզբը դնելուց կարճ ժամանակ անց Մարկոսը կնքում է մահկանացուն. թաղված է Մայր Աթոռի միաբաններին ընդհանուր գերեզմանատանը: Նրա տապանաքարի վրա փորագրված է. «Այս է տապան հանգստեան Ակնցի տպագիր ծերունազարդ Մարկոսին, որ եկեալ ի Սուրբ Աթոռս եւ շինեալ զգործարանն, փոխեցաւ առ Զրիստոս բարի մահուամբ, որում Տեր ողորմեսցի, ի ՌՄԻ. թվին (1771)»: Տպարան ունենալուց հետո հարկավոր էր մտածել տպագրության մյուս անհրաժեշտ նյութի՝ թղթի մասին: Թուրքս այն ժամանակ բերվում էր Եվրոպայից, ինչը մեծ դժվարությունների ու ծախսերի հետ էր կապված. ճանապարհները եւ, առհասարակ, հաղորդակցման միջոցները այնպիսի նահապետական վիճակում էին, որ բոլոր գրագրությունները եւ հաղորդակցումը՝ թե՛ մերձավոր ու թե՛ հեռավոր վայրերի հետ, կատարվում էին ոտքով շոշոփ սուրհանդակների միջոցով:

Շարունակելի
Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու



ներ եւ այդ հարցում վճռական էր տրամադրված, նա առաջարկում էր մեկ այլ «լուծում», այն է՝ «Հայաստանը միացնել Վրաստանին՝ վերցնելով գերմանական գորքերի պաշտպանության ներքո»:

Դեսպանը, փաստորեն, անձամբ Կովկասը միայն երկու՝ թաթարական եւ վրացական պետությունների միջեւ բաժանելու, իսկ հայկական տարածքները վերջինիս միավորելու կողմնակից էր: Ինքնին հասկանալի է, որ այս տարբերակը Կովկասում իր տնտեսաքաղաքական շահերը հետապնդող Գերմանիայի համար ուներ որոշ «առավելություններ»: Նախ՝ դրանով կբացառվեր Թուրքիայի հետ հարաբերությունների վտանգումը, որն ամեն կերպ կընդդիմանար հայկական քիչ թե շատ կենսունակ պետության ստեղծմանը: Միաժամանակ Գերմանիան այդ եղանակով կկարողանար, առանց թուրք դաշնակցի հետ հարաբերությունները վտանգելու, տիրել Կովկասի մեծագույն մասին՝ իր գերիշխանությունը եւ վերահսկողությունը տարածելով ոչ միայն բուն Վրաստանի, այլեւ հայկական այն տարածքների վրա, որոնք ներառվելու էին Վրաստանի կազմում: Եվ վերջապես, ինչպես դեսպանը հաճախակի նշում էր կառավարությանն ուղղված իր տեղեկագրերում, այդ դեպքում Վրաստանը հայկական «ուժերի» եւ կապիտալի միջոցով կարճ ժամանակում ծաղկում կապրեր, ինչը վերջին հաշվով ծառայելու

von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, S. 512):

Եթե նույնիսկ դեպքերից առաջ անցած Թալեաթի եւ Էնվերի այդ տեղեկությունն իրականությանը չէր համապատասխանում, ապա ամեն դեպքում դա բացահայտում էր Անդրկովկասի հայության եւ հայկական տարածքների հետ այդ եղանակով վերջնական հաշվեհարդար տեսնելու՝ թուրքական կողմի դիտավորությունը: Տվյալ տեղեկությունը, ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ պարզել Գերմանիայի վերաբերմունքն այդ առնչությամբ եւ վերջինիս նաեւ, ըստ հնարավորին, հաշտեցնել այդ գաղափարի հետ:

Սարդարապատում, Բաշ Ապարանում եւ այլ շրջաններում հայ ժողովրդի մղած հերոսամարտը, սակայն, խափանեց Կովկասի բաժանման՝ ինչպես գերմանական, այնպես էլ թուրքական պլանները՝ թուրք զավթիչների հարկադրելով ուղղակի բանակցությունների մեջ մտնել հայկական կողմի հետ: Չնայած Հայոց ազգային խորհուրդը, Գերմանիայից որեւէ շոշափելի աջակցություն չստանալով, հարկադրված էր հունիսի 4-ին ընդունել թուրքական կողմի պայմաններն ու ստորագրել Բաթումի պայմանագիրը, այնուամենայնիվ Թուրքիայի ռազմական պարտությունների արդյունքում կյանքի կոչվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

Աշոտ ՅԱՅՐՈՒՆԻ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 18.8.2017 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ